

42316

42316

•GULF

• 3

କୁଟ୍ୟାରଙ୍ଗ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ



U. ZUSUR

ԿԵ ՊԱՐՈՒՅՐԱԿ

Ազգային, Յեղափոխական, Սփրային և Զօւարբանի երգեր

The image shows a decorative title page from a Persian manuscript. At the top, there is a horizontal floral border made of stylized leaves and flowers. Below this, the title 'كتاب نجاشی' (Kitab-e-Najashi) is written in large, elegant Persian calligraphy. Underneath the title, there is a date in Persian numerals: 'تیر ۱۳۰۷' (Tir 1307). The entire page has a light beige background.

Տպագր. Զ. Ն. ՊԵՐՊԵՐԻԱՆ

1908

4. gaché

831.00
C - 37



ՀԵԴԱՐՁԱԿ

1001
848

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ

42316 875

زارطاريان كتيخالهسي
استانبول


چنگيل يقوشى وسىدە — ۲۶
931111111111111111111111111111
4. 901111111111111111111111111111
LIBRAIRES-ÉDITEURS
V. & B. ZARTARIAN FRÈRES
STAMBOL TCHAKMAKDJILAR N. 24-26

ԱՅԲՈՒԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ Ա. + ՀԱՏՈՐԻ

Ազատն Աստուած այն օրից	3
Ազատութեան սիրոյն համար	40
Ազատութիւն եկուր հոս	65
Ազնիւ ընկեր մեռանում եմ	57
Ակոռիի մեծ կարասին	5
Ահա աղաւնին նոյեան տապանին	14
Ահա բաժակ ուրախութեան	5
Ահա ելաւ լուսին արծաթ	90
Ահա կ'երթամ սիրելի մայր	66
Ահա հրեշտակ սոկեփետուր	7
Անի քաղաք նստեր կ'ուլայ	9
Անուշ քունիկն աչերն առեր	61
Աշխոյդ նաւաստին	92
Առ ընկալ ի գերկդ, մայր	10
Առ ինչ կորուստ, ինչ մեծ ցաւ	25
Արկածք Հայոց ժամանակին	13
Արիք Հայկազունք	1
Բամբ որոստան	18
Բարի եկար Հայր պատուական	89
Բարով եկար գու սիրուն	64
Բոյր մը ցնցող կը ծաւալի	84
Դաշնակցական խումբ գնանք	59
Դու զ՞վ խնդրես մայր իմ	47
Դու խելօք հաշւով	58
Եկել է գարուն, սոխակը սիրուն	38
Երազներուս տենչ ոլորտն	74
Երրոր բացուին գռներն յուսոց	53
Երբ օդը անձրեւի է	90
Թէ թեւ ունէի	71
Ի բիւր ձայնից բնութեան չքեղ	28



Իմ հայրենեաց հոգիս վարդան	41
Իմ հայրենիք զիս կը կանչէ	23
Իմ սիրելի զաւակունքս	24
Ծիծեռնակ, ծիծեռնակ	30
Կըռունկ ուստի կուգաս	72
Կոռւեցէք տղերք	63
Հայ ապրինք եղբարք	42
Հայ եղբայրներ թիկունքի գանք	60
Հայոց աշխարհում ծագեց	85
Հեռաւոր երկիր նըստած	52
Հերիք որդեակք այսքան տարուան	49
Հիմի՞ էլ լուենք, եղբարք	50
Հիմի՞ էլ խօսենք	55
Զայն մը հնչեց իրզրումի	28
Զայն տուր ով ծովակ	75
Մայր Արաքսի ափերով	31
Մեր հայրենիք թշուառ անտէր	35
Մեր սիրուն հայրենեաց	75
Մնացես բարեաւ	76
Յազատ ի վեր ի Մասիս	77
Նպատակիս համնիմ միայն	71
Ոհ ինչ անուշ և ինչպէս	54
Ով հայր մեր, հայր	94
Ով մեծասքանչ դու լեզու	80
Ո սգատերեւ յեցեալ	11
Պատի տըղայ չեմ օրօրեր	81
Ռուսական պետութիւն հայեր	82
Սասուն գաւառ հին	86
Սասուն ելաւ ապստամբեց	44
Վարդեր ու վարդեր	81
Վերջին վարդ	94
Տէր կեցո գհայս	88
Տալւորիկի զաւակ եմ քաջ	16
Քուն եղիր պալաս	83



Հ Ն Դ Ա Ր Ձ Ա Կ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԱՐԱՆ



Ը/3

Ե Ր Գ

ԱԶԳԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

1861 ՄԱՅԻՍ 24



Ա Ր Բ Ի Ք Հայկաղունք, յառաջ ընթանանք,

Սահմանադրութեան նոր բարեւ մալ տանք.

Ո՛ր Ազգն երբ զանի փրկարար կոչեց,

Նո՛ր հոգի, նո՛ր կեանք Անոր պարզեւեց :

Եկայք բարեկամք, առ բարձրեալն Աստուած՝

Ուղինք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ

Ազգն ու Սահմանադրութիւն :

ԳԵՂԱԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Զրկանք, բոնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի գուռն Հայոց ազգութեան.

Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջին հարթեց:

Յառաջիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Զնջեց ամենայն կարծիք անձնական.
Խեղդեց ամենայն ձայն անհատական.

Հըրաւէր կարգաց Աստուծոյ ձայնին,
Սռաջնորդ լինել գործոց ազգալին:

Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.
Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայերս անարգուած գրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.

Շընորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն է գրած:

Որուն շնորհիւ յարգ ստացանք մենք,
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Դու ալ Հայաստան, սիրուն հայրենիք,
Ալ այսուհետեւ մի սըգար լոիկ.

Զի ա'լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ,
Զքեզ հարս կ'ուղեն տեսնել զարդարեալ:

Ալ մի՛ լար մայրիկ, լսցդ ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայե՛ր, միանանք մեր մօրն հետ օրհնենք
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.

Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թո՛ղ վարեն ուրախ կեանք մի փառունակ:

Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան.

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Յ. Գ. ԱԾՎԱՃԵԱՆ



ԵՐԻ ԱԶԱՏՈՒԻ ԹԵԱՆ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել
Իմ հողանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգեւել.

Ես անբարբառ մի մանուկ,
Երկու ձեռքս պարզեցի.
Եւ իմ անզօր թեւերով,
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ,
Օրօրցում կապկապած.
Լալիս էլ անդադար,
Մօրս քունը խանգարած.

ԵՐԳ ԲԱԳՈՍԻ

Ակոռիի մեծ կարասին բոլորտիքն են բազմեր,
Աւագ իշխանք, ծեր պարոնայք ժողով են հոն կազմեր:
Այո՛ այո՛ ժողովք են հոն կազսեր:

Սաստիկ է վէճն մեծ է խնդիրն զոր հոն տեղ կը խորհին
Թէ ի՞նչ կերպով գարման լինէր հիւանդ մեր աշխարհին,
Այո՛ այո՛ հիւանդ մեր աշխարհին:

Մէկն այս կ'ըսէ մէկն այն կ'ըսէ կը ծագի լոյն առտուն
Ինձ լսեցէք, տեարք, կը գոչէ աւանին պետն արթուն,
Այո՛ այո՛ աւանին պետն արթուն:

Թող թագն առնու կ'ըսէ թագոս և փառօք ապրի շատ,
Խոկ ցնծութիւնն ըլլայ գշխոյ և գահն ալ յԱրտաշատ,
Այո՛ այո՛ և գահն ալ յԱրտաշատ:

Այսպէս մեզի նոր ցնծութեան արեւներ կը ծագին,
Առողջ կ'ըլլայ մեր ժամանակ և նոր մեր աշխարհին,
Այո՛ այո՛ և նոր մեր աշխարհին:

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ահա բաժակ ուրախութեան,
Ի սէր յաւէրժ միութեան,
Զի՛ վայելուչ՝ որդիք Հայկեան,
Մէկտեղ հրճուին և ցնծան:

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կը եմք մի սիրտ մի արիւն:

Ենդրում էի նրանից,
Բաղուկներըս արձակել.
Ես այն օրից ուխտեցի,
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուխս մինչ կապերն,
Արձակուեցան բացուեցան.
Մինչ ծնողքըս իմ ձայնից
Ենդացին ու բերկը եցան:

Նախկին խօսքն որ ասուցի,
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
Ազատութիւն դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից:

«Ազատութեա՞ն, ինձ կրկնից,
Ճակատագիրը վերեւից.
Ազատութեա՞ն դու զինուոր
Կամի՞ս գրուիլ այս օրից:
«Ո՛հ, փշտ է ճանապարհ,
Քեզ շատ փորձանք կ'սպասէ.
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհո խիստ նեղ է»:

—Ազատութիւն, —գոչեցի, —
Թող որոստայ իմ զլիսին.
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թող դաւ զընէ թշնամին.

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչեւ անտրդ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտ կրկնիմ,
Ենդադար ԱԶԱՏՈՒԹԻՒՆ:

Վերցուր աչքըդ յերկնից կամար ,
Փալի հեռուն աստղ մի պայծառ ,
Եւ դու , ո՛ Հայ , զարթիր սիրտ առ ,
Հայոց բաղդըն ա՛լ չէ խաւար :

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Բա՛ւ է այսչափ բաժանում ,
Ըլլամք ուրախ և խնդում .
Նախանձ , վրէժ ձեզ թողում ,
Անդունդք և վիճք անհատնում :

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Փորձ մը ըրինք բաժանման ,
Փորձ մ'ալ ընենք միութեան .
Լեցուի փափաքդ Հայաստան ,
Տես որդիք քո միանան :

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ինչ և ընեմք ինչ կերպ առնեմք ,
Ո՞չ չը գիտաց թէ մեք Հայ եմք .
Ո՞վ չը գիտեր թէ եղբայր եմք ,
Արիք ծիծաղ դիմօք երգեմք ,

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ո՞ր բռնաւոր ո՛ր օրէնքներ
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր

Ազգիդ օգուտն ու բարիքներ ,
Սիրոյ գահն է յերկինս ՚ի վեր :

Կեցցէ՛ սէր և միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵՍՆ



Ի ՄԻՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՅ

Ահա հրեշտակ ոսկեփետուր թռուցեալ բար-
ձուստ երկնաճեմ ,
Հայոց բաղդին հեծեալ ՚ի կառո բարձր գոչէ
զուարթագէմ .

Հզօր պատգամ
Ի վերուստ գտմ .
Միութիւն , Հայք ,
Եւ նոր ձեզ կեանք :

Տրոփեն ուժգին և լանջք և սիրտք ,
Խաղալ արիւն ՚ի թինթ ՚ի թինթ ,
Մեղք կաթէ սուրբ սէրն ՚ի խինդ ,
Յառաքինոյն ՚ի Հայու սիրտ :

Սիրաբորբոք համբոյր բղխեն ,
Արտաստւաթոր աչկունք ցողեն :

Արիք Հայկաղունք ,
Ի սէր փութասցուք .
Եռանդուն մատի օ ,
Ի համբոյր հեզիկ :
Տուք համբոյր մի եւս ,

Բացէք զձեր թեւս .
Տուք համբոյր մի եւս ,
Սիրոյ է պարզեւս :

Կեցցեն յաւերժ վեհ Հայկազունք ,
Անմահութեան սիրուն սերունդք .
Կեցցէ յաւերժ Հայկայ ոգին ,
Մեղ են վկայ երկիր երկին :

Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն՝ ոչ 'ի
շանթից ահարկու ,
Այլ յակնարկի և եթ սիրոյ վերաստացեալ
կենաստու :
Երկին երկիր ,
Կան 'ի յակճիռ .
Ընդ Հայ ազգիս
Բիւր հրաշալիս :

Բացցին անդունդք սեաւ անյատակ՝
Ծածկել զբաղդին հին յիշատակ .
Տիեզերաց բացցին մատեանք՝
Անդէն դրոշմել զշայոց պարծանք :

Կեցցէ Հայոց սէր պանծալի .
Բիւրող փառաց նախանձելի :

Գ. ԱՊՏՈՒԼԱՀ



Ո Վ Բ Ա Լ Ի Բ Ր Ա Ն Ք

Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ի Ն Հ Ա Յ Ո Յ

ԱՌ ՀԱՅԱԶԴԻ ՈՄՆ ՈՐ ԳՆԱՅԵԱԼ ԷՐ ՆՄԱ Ի ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անի քաղաք նատէր՝ կուլայ ,
Զկայ ըսող՝ մի' լայ , մի' լայ .
Կ'ըսես քիչ է , թո՛ղ , մնայ՝ լայ ,
Ա՛խ , ե՛րբ լսեմ՝ մի' լայ , մի' լայ :

Շատ ցաւերով կ'այրիմ տապիմ ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ .
Որ խղճալոյս գայ մօտենայ ,
Հիչ չէ ըսէ մի' լայ , մի' լայ :

Յ Ո Ր Հ Ո Ր Ր Ա Կ

Ա՛խ Հայ տղայ , խղճա՛ ինծի ,
Տես թէ քո Անին ի՞նչպէս է .
Հերիք ես լամ գու չգթաս ,
Չէ՞ քո Անին ափառս է :

Ա՛խ ու վախով օրերս անցաւ ,
Լալէն աչքերս կուրացաւ .
Որբ մնալն ինձ վիճակեցաւ ,
Բախտս բնաւ զիս մոռացաւ :

Կորուցեր եմ թագաւորներ ,
Ժողվեր եմ գլխուս քէօռ բուվեր .
Որք միշտ կ'երգին «Անին անցաւ ,
Անին անտէր աւերեցաւ» :

Մնին եմ շատ մարդաբնակ,
Մնացեր եմ գառն աւերակ.
Իմ լացն իմ կոծն ու աղաղակ,
Անտէր որբերու նմանակ :

Երբեմն էլ շատ աննման,
Հայոց քաղաքն արեւելեան.
Աւերեր եմ սեփահատակ,
Նստեր կուլամ, ես միայնակ :

Եկար տեսար դարձեր կ'երթաս,
Լալով կ'ըսես «բարեաւ մնաս».
Աստուած սիրես չմոռանաս,
Մասիս սաշին ե՛րբ մօտենաս :

Հսես իմ քա՛ջ Արարատին,
«Նսեր կուլայ քո խեղճ Անին».
Կ'ըսէ, Ե՞րբ աւետիք կը տաս,
Թէ՝ «իմ Անի հերիք ե լսա» :

ՀԱՅԱՍՏԱՆ



Ի Ղ Զ Ա Ռ Հ Ա Ս Ա Ն

Առ ընկալ 'ի գիրկդ, մայրըդ Հայաստան,
Զորդիս քո սիրուն ցրուեալ ասոտ և անդ.
Տես՝ ի՞նչպէս սիրովդ և քու կարօտով,
Վառուած բորբոքած քու տեսոյդ ցանկան :

Յորդորակ

Արի կաց ուրեմն, ով մայր Հայաստան,
Նոր ոգի զգեցիր փառօք անվախճան :

Օն զրահաւորիմք, ո'վ որդիք Հայկեան,
Մեր մօրն արցունքներ չնշել յաւիտեան.
Զօրանանք սիրով և սուրբ միութեան,
Ըլլանք ախոյեան ընդդէմ թշնամեաց :

Յորդորակ

Հապա գործելու ժամանակն հասաւ,
Հայրենասիրին կայ փառք անզըրաւ :

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

Մ Ա Ի Ս Ա Յ Ն

Ո' սպատերե յեցեալ նոճոյս 'ի ստորոտ,
Զաղիս Հայոց լարեալ 'ի քնար տխրանուէր .
Աշն իմ 'ի լար, աչկունքս 'ի վեր մերթ յարօտ,
ՑԵ՛րբ հնչեցից 'ի վանդ ողբոցն իմ զայեր :

Ո'հ ժպտեսցին աչկունք բաղդին յիս արդեօք,
Թէ որպէս ցարդ՝ նոյն և յապայն անողոք .
Ե՞րբ ծագեսցէ երջանկութեան քաղցր արեգ,
Եւ փոխեսցի տխրանըւագ ողբս յօրհներգ :

Ե՞ր ոչ, լուսնետակդ, վառ 'ի վառ,
Կիսով յամպոց գողացեալ .

Եւ զերթ կանթեղ իւղասպառ,
Մերձ 'ի խաւար գոգ շիջեալ :

Ո՛հ միայնիկ և մնջիկ,
Ողբամ ըզբաղդ խաբուսիկ .
Եւ թէ լոռէ իմ հագագ ,
Լըսեմ ձայնիս զարձագանդ :

Հեծէ սրտիս իմ խոռոչ ,
Մատունքս 'ի լար հըպին ոչ .
Այլ զի՞ տեսիլ անսովոր ...

(առանց եղանակի)

Մինչ կամ աստէն մենաւոր :

Աչկո՞ւնքս արգեօք զիս խաբեն ,
Այլ ո՛չ , գոքա հրեշտակք են .
— Ողջոյն երկնից զոյգ տատրակք ,
— Ողջոյն կրկին աղաւնեակք ,

Սէր ԵՒ ԳՈՒԹ :

— Ողջոյն , հրեշտակդ ողբերգակ ,
— Ահա՝ դու չես միայնակ :

Մի՛ արդ խոռվիր , չեմք խաբուսիկ երեւոյթ ,
Նա քեզ ծանօթ . Սէր իմ անուն , իսկ սա Գութ .
Կաց դու պահ մի , տըխուր ողբաց տո՛ւր աւարտ ,
Լուր զոր երգեն զաւակք երկրին , ուր կաս արդ :

Խ Մ Բ Ե Ա Կ Ն

(Ի ԱԵՐԺՈՒԱ ԱԿԱԵԱՂ)

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ
Ուխտեմք 'ի Սէր եղբօր՝ ըզկեանս գընել գրաւ ,
Օ՛ն անդը 'ի մէնջ՝ այր ընկերին լարել դաւ :

Սրացաւ 'ի մէնջ բազգն անհամբոյր ,
Սրդ նոր բազգիս քաղցր է համբոյր .
Եղբայր զեղբայր գգուէ Սիրով ,
Ճոխն աղքատին մատչի Գթով :
Էանց գիշեր՝ արդ առաւօտ ,
Ի ցող ժպտին Մասեաց արօտ .
Եւ վառ 'ի վառ շողշողելով
Լուսն արեգին ծըփայ 'ի ծով :

Հա՛պա մանկունք ,
Վեհ քաջազունք ,
Ի գլուխ պըսակ ,
Ի յաղթանակ :
Առեալ նուագու ,
Յ'Արաքս արագու .
Օ՛ն փութասցուք ,
Օ՛ն երգեսցուք :

Սէր և գութ ,
Մեր պըսակ .
Առ մեր բազգ ,
Հըսւիրակ :
Ցնծացեն
Որք լոեն .
Թէ՛ «ուր Հայ ,
Զիք՝ անդ վայ » :
Ե Մ. ՄԵԼԻՔԵԱՆ

Ա Կ Ե Տ Ա Բ Ե Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Ա. Ռ. Հ Ա. Յ Տ. Ա. Յ

Ահա աղաւնին,

Նոյեան տապանին :

Թռած Մասեաց մառախլապատ երկինքէն,
Հրաւէր կարդայ ազատութեան Հայրենեաց .
Ասդին անդին թափառական Հայերուն,
Զայն աւետեաց Հայուստանի բերանէն .
Ողջոյն կուտայ Հայոց, ողջոյն նոր փառաց,
Հերիք կ'ըսէ այսչափ հարիւր տարուան քուն :

Օ՞ն աչք,

Մեր Հայրենեաց հրաւիրակին .

Ակա՞նջ,

Զի պատգամ է այս երկնային :

Արթնութիւն՝ արդ պանդուխտ Հայեր,
Հաստ կ'անցնի Հայոց օրեր .
Առէք ողջոյնս ազատութեան,
Ողջոյն սիրոյ եղբայրութեան .
Վերջ վիճակի գերութեան ձեր,
Յերկնից Հայոց այս է պատուէր :

Դարերէ ի վեր արիւն արցունքով,
Թռաւ Հայրենեաց քաղցր աւերակներ .
Թռչող հրեշտակն ալ ահա ինձ ընկեր,
Վկայ է խօսքիս ինդում երեսով :

(Հրեշտակ)

Այո՛ այո՛ Հայ տղաք,
Վկայ ես ձեր հրեշտակ .

Հայաստանի նոր գալնան,
Ծաղկունքն ահա՛ ձեզ կուտամ:

Օ՞ն արդ քորք և եղբարք որդիք դիւցազանց,
Զերթ թռչներ գարնան գեղ գայլայիկով
Սուրանք փոյթ՝ գիրկ հայրենի փառաց :

Հոս թողունք հոս,

Վատթար սրտեր .

Հետ առնունք սէր ,

Հոս թողունք հոս

Ատելութիւն ,

Ոսիխն Հայուն .

Հոս թողունք հոս :

Ազգերնիս մէկ, լեզունիս մէկ, հաւատքնիս մէկ,
Հայրենիք մէկ, հայրենիս մէկ, փառքերնիս մէկ .
ինչո՞ւ չըլլայ սրտերնիս մէկ :

Եւ արդ հոս ի սեւ կըրից զինաթափ ,

Ամենքս ալ ենք Հայ հաւասար եղբայր .

Մեր զէնքը Խաչն ի կուրծս վառ ի վառ ,

Օ՞ն զհետ հրեշտակիս ծափ ի ծափ :

Զարնենք տաւիղ ոսկի քնար ,

Սրբենք դառն ցաւի աչեր .

Աշխոյժ ի սիրտ, ձայն վար ու վեր ,

Ապրի Հայոց Սւետարեր .

Ուրախութեան այս Հայոց դար :

Օ՞ն պար խաղ ,

Մէն մ'ի ձախ .

Մէն մ'ի յաջ ,

Ետ յառաջ :

Ուրախութեան այս Հայոց դար :

Ներսէս Մէջոնիրելէն

S U L H A R H Y

Տալւորիկի զաւակ եմ զորդ
Քաղքըցու պէս չեմ թուլամորթ ,
Սարի զաւակ , քարի որդի
Հին քաջ հայոց եմ մնացորդ .

Տալւորիկի զաւակ եմ քաջ
Չեմ խոնարհիր Քըրդի առաջ
Քարուտ լերանց եմ ազտա լաճ
Չեմ տեսել ոչ արօր ոչ մաճ :

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք
Տալորիկի զաւակ եմ քաջ
Ազատութեան սիրոյն համար
Եկէք գէպ ինձ յառաջ յառաջ :

Երբ իմ աչքերս բացի յաշխարհ
Ազատ տեսայ մեր սար ու քար
Մինչ չփակեմ աչքս ի խաւար
Պիտ' չը կոխեն հոս ստք օտար .

իմ մամ ծնաւ զիս սարելու ծոց
բնկոյզի կոճղ մ' լինձ օրօրոց
Տըկլոյ ծընայ, մեծցայ տըկլոյ
կեանքիս բաժինն է կախւ ու բոց.

Հայ աղբբրտիք, վայ աղբբրտիք, են .

Ոտքըս բոպիկ, կուրծքըս միշտ բաց
ինչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մնաց
ինձ մօտ մէկ է արեւ, փուրք, ցուրտ
Բաւ է չիշխէ Պարսիկ կամ Քուրդ :

իմ կեանքըս խիստ է և շարքաշ
Փափուկ կեանքի բնաւ չեմ վարժ
Բնակարանս է ապառաժ
Ընկերաց մըրբիկ ու երկրաշարժ .

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, եւն:

Հարստութիւն, ուսում, հանձար
Փառք ու պատիւ չեն ինձ համար
Բաւ է ունիմ տէգ, թուր, խանչար
Բնաւ չի խրոխար վրաս օտար.


Սիրած զէնքելոս չեմ ձգեր ձեռքէս
Առիւծն անվախ չէ ինծի պէս
Կը սիրեմ որս, կուիւ, աւար
Կը սպասեմ երբ ինկնի հաւար.

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք եւն:

Թե՞ող հայք բնակին հովիտ ու գաշտ
Վատ ազգին հետ չը լինին հաշտ
Ես պիտ մնամ միշտ աննուած
Թէև վրաս գալ քսան վաշտ .

Ցորենի: տեղ կ'ուտեմ կորեկ
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ
Ելինեմ փետոտ, խօփ, խաչերկաթ
Մանր է դատումս, բայց եմ ազտո

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն
Քնողաբնակ Հայկական Մրգարան ԳՐԱԴԱ



Այծեամի պէս կը ցատկուտեմ
Առիւծի պէս կը մռնչեմ
Ծովի նման կը փրփրիմ
Կայծակի պէս կը հարուածեմ.

Կուոյ դաշտը բաղդն է կեանքին
Երբ կը ծագի արշալոյսը
Կամ աւետիս տայ գրօշակին
Կամ պաղ տեսնէ քու երեսը

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, ևն:

Հաւար ինկնի երթամ յառաջ
Սասնոյ լերինք հանեն հա՛ռաչ
Հառաչ հանեն և ներկուին
Իւր կտրճի արխւնով քաջ:

Կտրճին սիրու, կտրճին ձեռք
Ինչ փոյթ քաջին հալզար մէկ վէրք
Մէկ հարուածին կուտաս հարիւր
Ագուտին լէշ կանես հազէր

Հայ աղբըրտիք, վայ աղբըրտիք, եւն:

Վ Ե Ժ Փ

Բա՛մբ . որոտան բարձուստ բոմբիւնք յԱյրարատեան
դաշտն ի վայր,
Արի արանց արխւնք յեռանդն առատանան ի հրազար,

Հրաւէր հայրենեաց հըռչակի ընդ հանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր .
Որք երկնաւորին պատկին էք կարօտ,
Որք երկրաւորին փառաց երկնայսրդ .
Հապ' օն, արի արանց մանկունք,
Հայրենավլիէժքըդ Հայկազունք:
Հապ' օն, ի զէն գունդագունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ,
Ի զէն ի վրէժ, օն անդր յառաջ,
Ի զէն ի վրէժ, մի՛ ձախ, մի՛ յաջ,

Օ՞ն անդր յառաջ

Մի՛ ձախ մի յաջ

Օ՞ն անդր յառաջ

Յառաջ յառաջ,

Հապ' օն յառաջ :

Հայկեան փանդուանց որոտընդուտ դռնչին բարբառք
մարտագոռ,
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի շեփոր .
Շարժեն հրեշտակք թեւըս լուսափողփողս,
Ճիւազք ճուճազաց կայտուն ի գրժոխս.
Շոխնդըն շանթառաք զեթերօք փարի ,
Սարսափին սանդարք ի խօլ խաւարի :
Հապ' օն, արի արանց մանկունք, եւն:

Մամիկոնեան սաւառնեցաւ գրօշն յայերս գոգ ծալ ի
ծալ,
Ի ճակատուց ի թընամեաց սա ո՛չ գիտաց յուրաստ

կալ,
Հեծեալ հրանժոյգ վեհին վահանայ՝
Վրէժ կանչէ արեան կարմիր վարդանայ .
Փոլնչեալ բոցաշունչ գափը ի գարշապար .

Թագմանուտ վարդի յանժոյժ երիվար :
Հապ' օ՞ն , արի արանց մանկունք , եւն :

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ ,
Գոռան Կորդրիք , Մասիք սարսին , հունչեն սահանք
Երասխայ .

Ի գրոհ ի գրոհ տալ բիւրուցն ստնատրոփ ,
Տատանին գաշնակք՝ յառնէ շոինդն ապշոպ
Կոռուփ առ կոռուփ կոփեն կըմբայք տէդ առտէդ ,
Դղորդ առնուն տարերք՝ կորովեացն ի վէդ :
Հապ' օ՞ն , արի արանց մանկունք , եւն :

Արիք ի կոիւ քաջակորովքդ ընդ կորակոր հրոսն
Արեաց .

Հապա համհարզք մեր բիւրայաղթք ձեզ նոր հան-
գէսք հն ֆառաց .

Թռիք ի ռազմ ի խազմ , առէք զէն և զարդ ,
Երեսնիւք յըսնիւք հարուլ բիւրս հազարս .
Ի սուր ի սուսեր , կարշնեղ յաղեղունս
Բզսեաւ Սասանեանց ջարդել կառափունս .
Հապ' օ՞ն , արի արանց մանկունք , եւն :

Մինչե ցե՞րբ ցե՞րբ սուգ ունի զՀայս , հատէք զար-
տօսր , որբք այրիք ,

Հարանց՝ հարսանց՝ եղբարց՝ որդւոց , հանուրց Հայոց
վրէժխընդիրք ,

Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց ,
Յուշեկ հընչեն ձայնք արեան սիրելեաց .

Սոսափիւնք յերկնից՝ արհաւիրք յերկրէ
Քաջացս օժանդակ՝ ըզՊարս հերքեացէ ,
Հապ' օ՞ն . արի արանց մանկունք , եւն :

Օ՞ն անդը ի բա՛ց հայկեան հողոյ հըսկայազանց եւ
ոըրբոց ,

Ի բա՛ց ջոլիր չուտուական մոխրապաշտիցըն պըղծոց .

Դաշտք մեր մերժեցն զոսկրոտին անգամ ,
Արիւնք վըկայից զճապաղին անժամ .

Ռան ընդ դիս տոռնեալ գարձցին ի փախուստն
Մատնակուրծք ընդ Հայս հայեցին հեռուստ

Հապ' օ՞ն , արի արանց մանկունք , եւն :

Արք աղեղանց , բարձր ի թիրախ թռուչի՛ք՝
Վերջին ձեզ խրախոյս ,
Առեալ տարցուք զանթիկնագարձ զայս վարդագոյն
դրօշ անխոյս .

Ի վերայ յիսնից յաղթից Վարդանալ ,
Պարսկական բազկաւ արւայն Վահանայ ,
Շեշտ ի ծայր չիրմի գաշտին Շաւարշան
Տընկել յաղթանակ անմահ Հայութեան .

Հապ' օ՞ն , արի արանց մանկունք , եւն :
Հ. Ղ. Վ. Ալիշան



Ա Ա Ի Գ Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի

Իմ սիրելի զաւակունքս ,
Կը թափառին օտար յաշխարհ .

Ես ո՞ւր դիմեմ , ո՞ւր փնտըռեմ ,
Կը ծառայեն այլոց խոնարհ :

Եկա՛յք որդեակք իմ ,
Զեր մօրն այցելութեան :

Դարեր անցան լուր մը չառի ,
իմ քաջերս մնուան կորան .
Կ'ուլամ , արիւնըս կը սառի . . .
Մէկը չունիմ տայ ինձ դարման :
Եկա՛յք որդեակը , և այլն :

Արիւնս ցամքած , սիրտըս մաշած ,
Դէմքս է տըխուր մինչ յաւիտեան .
Եւ կարօտոյն իմ որդեկաց ,
Պիտի իջնեմ սեւ գերեզման :
Եկա՛յք որդեակը , և այլն :

Եւ գու հովիւ թափառական ,
Կ'երգես տըխուր ՚ի մէջ հովտաց .
Ե՛կ , արտասուենք թանգ կորըստեան ,
Տըխուր մահուան մեր որդեկաց :
Եկա՛յք որդեակը , և այլն :

Իսկ գո՛ւ կըռունկ իմ Հայրենեաց ,
Գընա՛ հեռո՞ւ աչքէս ՚ի բաց . . .
Յետին ողջոյն տար զաւակաց ,
Զի անքիս մէջ յոյս է մեսած :
Եկա՛յք որդեակը , և այլն :

Հ Ա Յ Ա Խ Ե Կ Ի Ք

Իմ Հայրենիք զիս կը կանչէ ,
Հեռու եմ Հայաստանէն .
Հայու որդւոյն կը վայելէ^Ը
Հեռանալ Հայաստանէն :

Միթէ արծաթ ոսկի գոհար ,
Կըսփոփէ^Ը Հայաստանը .
Այն որ կ'ողբայ որդւոց համար ,
Խղճալի Հայաստանը :

Խոր տըխուր թեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը .
Բոպիկ ոտքով արծակ մազով
Կ'արտասուէ Հայաստանը :

Անգութ երկինք ալ չը յիշեր ,
Մոոցեր է Հայաստանը .
Անալիր Հայերն ալ չեն սիրեր
Անուշիկ Հայաստանը :

Ո՛հ թողէք զիս խօսիմ աղատ ,
Երգեմ միշտ Հայաստանը .
Անուշ երկիր կոյս անարատ ,
Անըման Հայաստանը :

Արեւ ծածկեր է իւր դէմքը ,
Խաւար է Հայաստանը .
Հայոց արեւն ալ մարեր է ,
Սեւ հագեր Հայաստանը :

Թըշուառ սըրտիս ձայն կը կըտրէ ,
Ողբալով Հայաստանը .

Ո՞հ չիկայ Հայ , ո՞ր ըսփոփէ ,
Նուազեալ Հայաստանը :

Թէ և կըտրի իմ վերջին շունչս ,
Պիտի պոռամ Հայաստան .
Պըլուիմ մէյ մ'իմ Հայրենեացո՝
Հապա մըտնեմ գերեզման :

Անդորրութիւն ես կը խնդրեմ ,
Սիրելի Հայաստանին .
Կըտրել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող ,
Սոսկումըն գերեզմանին :

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

ՇԱՐԺՈՒՄ ՀԱՅՐԵՆԵԱՅ ՍԻՐՈՅ

Ձայն մը հնչեց իրզրումի հայոց լեռներէն ,
Թունդ թունդ ելան հայոց սրտեր զէնքի շաչիւնէն :

Հայ գիւղացին դարուց ի վեր զէնք , սուր չէր տեսած ,
Դաշտը թողուց , սուր , հրացան բահի տեղ առած :

Հայ ծերուկը ցուպն ի ձեռին լալով խնդրում է ,
Հայրենիքի աղատութիւն տեսնել ու մեռնիլ :

Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն գնալ ,
Պատերազմի դաշտին վըրայ վէրք տալ՝ ըստանալ :

Թընքուշ կեանքը ծանր է թըւում Հայ օրիորդին ,
Զէն ի ձեռին սիրտ է տալիս հայոց քաջերին :

Երիտասարդք թոթով լեզուվ նամակ ցրուել են ,
Արարատայ դաշտին վըրայ զինուոր խըմքել են :

Ա՛լ բաւ լացիր , Մայր Հայաստան , երկիրը փառաց ,
Քու զինուորներդ միշտ կտրիծ են , որչափ ալ քաղցած :

Ա՛ռ ու գգուէ՛ այդ քաջերը քու սըրտիդ վրայ ,
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրբ հողիդ վրայ :

Անմիութիւն , տունը քանդող հայոց խեղճ ազգին ,
Հրաժարեցաւ , տեղի տուաւ միութեան ձայնին :

Լըսեց Քիւրտն ու սառեցաւ արիւնը խեղճին .
Զէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին :

Ցընծա՛ , մայր մեր , ո՞վ Հայաստան , որդիքդ միացան ,
Ութը տարուան սուգ ու թախիծ մեզնից վերացան :

Ուրախացաւ Մայր Հայաստան , ելաւ կանգնեցաւ ,
Հինգ դարերի սուգ , տառապանք մի քիչ մեղմացաւ :

ԶԻՆԿՈՐԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Աս ի՞նչ կորուստ , ի՞նչ մեծ ցաւ ,
Բանթոլոնիս կոճակը
Կոճկելնիքէն բրթեցաւ ,
Գնաց մտաւ որ ծակը :

Ա՛հ, կ'աղաչեմ, պարոններ,
թէ որ տեսաք նէ տեղ մը,
իմացուցէք ո'ր ծակն է,
Երթամ հանեմ զայն շուտ մը:

Ոչ պղտիկ էր ոչ մեծ էր,
Զափաւոր ալ չէր բոռեր.
Ինչ գոյն ըլլալն ալ մոռցայ,
Կարմիր էր թէ սեւի վրայ:

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ,
Այս կորուսոս քիչ բան չէ.
Թի՛սնապետոս իմանայ նէ,
Վերջը բանիկո բուսած է:

Գտէք, գտէք,
Կոճակո գտէք.
Գտէք, գտէք,
Կամ տաս փարա տուէք:

Միտքս կուգայ թէ վրան
Արծիւ մը կար խոշորէկ.
Եւ կորուսեալ այս կորճան,
Գամլած էր հոս ամուրկեկ:

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .:

Խանութները չեն ծախեր,
Եւրոպայէն չեն բերեր.
Շունշանորդի կոճակին
Ծառն ու արմատն է չորցեր:

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .:

Բըուսիացւոց կոխւը
Իմ գլուխս ալ պայթեցաւ.
Քանզի Լօրէն և Ալզաս
Կոճակիս հետ մէջ խաղաց :

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .

Զինափորձին ատենը
Կը գիտեն մեր չորս կողմը.
Ոտքէս բռնէ մինչեւ վեր
Կը խառնեն, տեղ չեն ձգեր :

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .:

Կուտան ձեռքս հրացան,
Շալկէ, կ'ըսեն, ուսիդ վրայ.
Ի՞նչպէս կայնիմ, դուք ըսէք,
Բանթոլոնս վար կ'իյնայ :

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .:

Բարեկամացս հանդիպիմ նէ,
Հարկաւ պիտի բարե տան.
Ձեռքս հսուկէ պակաս չէ,
Պիտի տեսնեն ու խընդան :

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .:

Աղջկանց ալ բան մը պէտք է,
Երբոր տեսնեն կը խընդան.
Ճամբաս հատաւ փոխելով,
Թըռչելու է պալօնով :

Ա՛հ, մի՛ խնդաք, պարոններ, ևն .:

Պառաւ կանանց բերանն ալ
Կըրնաս գոցեր նէ գոցէ .
Անանկ բաներ կը մաղեն ,
Որ կոճակըս բամբասեն :

Ա՛հ , մի' խնդաք , պարոններ , ևն . :

Սիրուհիս ալ , Աստուած տայ ,
Աս փորձանքըս չիմանայ .
Քանզի գիտեմ վախկոտ է ,
Պըտիկ բանէն դող կ'ելլայ :

Ա՛հ մի' , խնդաք , պարոններ , ևն . :

Կեցէք միտքս բան մ 'եկաւ ,
Վազիմ երթամ ձար չըկայ .
Տիօժէնը ուր որ է ,
Գուցէ կոճակս այն գըտնայ :

Ա՛հ , կ'աղաչեմ , պարոններ ,
Զըլլայ երբէք զիս ծաղրէք .
Որ կ'ըլլայ որ բրցունէք ,
Դուք ալ կոճակի տէր էք :

Գ. Հ. ՌԵՇՈՒԻ



Ե Ղ Բ Ա Յ Ր Ե Մ Ք Մ Ե Ք

Ի բիւր ձայնից բնութեան շըքեղ՝
Թէ երգք թոչին սիրողաբար ,
Մասունք կուսին ամենագեղ ,
Թէ որ զարնեն փափուկ քընար ,

Զունին ձայն մի այնքան սիրուն ,
Քան զանձկալի եղբայր անուն :

Տո՛ւր ինձ քու ձեռքդ , եղբայր եմք մեք ,
Որ մըրըրկաւ էինք զատուած .
Բաղդին ամէն ոխ չար ու նենդ
Ի մի համբայր ցըրուին ի բաց :
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայր Հայաստան ,
Տեսնէ զորդիս իւր քովէ քով ,
Սըրտին խորունկ վէրքըն գաժան ,
Բաղցը արտասուաց բուժին ցօղով :
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մինք ի հընում ,
Եկէք , դարձեալ յար անբաժան .
Խառնենք զարտօսր և ըզխընդում ,
Որ բաղմածնունդ ըլլայ մեր ջան :
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ յոգնինք , մէկտեղ ցանենք ,
Մէկտեղ թափին մեր քըրտինքներ .
Հզհունձք բարեաց յերկինս հանենք ,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :
Հնդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն ,
Քան զանձկալի եղբայր անուն :
Մ. ՊէտիկթԱնկեԱն

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽԾ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ու՞ր, ինձ ասա՛,
Թըռչում ես այսպէս արագ:

Ա՛խ, թըռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղը Աշտարակ,
Անդ շինի՛ր քո բոյնը,
Հայրենի կըտուրի տակ:

Անդ հեռու ալեւոր
Հայր ունիմ ուզգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարե արա՛,
Ասա՛, թող նըստի լայ,
Իւր անբաղդ որդու վըրայ:

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անսոէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեսնքս մաշուել, եղել է կէս:

Ինձ համար ցերեկը՝
Մութ է շըրջում արեգը.
Գիշերը թաց աչքիս՝
Քունը մօտ չէ գալիս,

Ասի՛ր, որ չի բացուած
Թառամեցայ միացած.

Ես ծաղիկ գեղեցիկ,
Հայրենի հողից զըրկած:

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թըռի՛ր արագ,
Դէպ' Հայոց երկիրը,
Ծընած տեղու — Աշտարակ:

Գ. Ա. ԴՐՈԽԵԱՆՑ



ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով,
Քայլամոլոր գնում եմ.
Հին հին գարուց յիշատակ,
Ալեաց մէջը պըտրում եմ:

Բայց նոքա միշտ յեղեղուկ,
Պըտոր չըրով եղերքին.
Դարիւ գարիւ խփելով,
Փախստում էին լաւագին:

«— Արա՛քս՝ ինչո՞ւ ձըկանց հետ,
Պար չես բռնում մանկական.
Դու դեռ ծովը չը հասած,
Սըգաւոր ես ինձ նման:

«Ենչո՞ւ արցունք ցայտում են,
Քու սէգ հըպարտ աչերից .
Ինչո՞ւ արագ փախչում ես,
Այդ հարազատ ափերից :

«Մի՛ պըղտորել լատակըդ ,
Հանդարտ հոսէ խայտալով .
Մանկութիւնը քու կարճ է ,
Շուտ կը հասնիս գէպ 'ի ծով :

«Վարդի թըփեր թո՛ղ բուսնին ,
Քու հիւրընկալ ափի մօտ .
Սոխակները նոցա մէջ ,
Երգեն մինչեւ առաւօտ :

«Մշտադալար ուովիներ ,
Սառ ծոցի մէջ քու ջրին .
Ճըկուն սատըն ու տերե ,
Թո՛ղ թաց անեն տապ օրին :

«Ափերիդ մօտ երգելու ,
Հովիւք թո՛ղ գամն համարձակ .
Գտան ու սւլը քու վըճիտ ,
Զուրը մըտնեն միշտ արձակ :»

Մէջքը ուոցուց Արաքսը ,
Փրփուր հանեց իւր տակից .
Ամպի նման գոռալով ,
Խապէս խօսեց յատակից :

« — Խիզա՛խ , անմի՛տ պատանի ,
Նիրհը ինչո՞ւ դարեւոր .

Վըրդովում ես , նորոգում ,
Իմ ցաւերը բիւրաւոր :

«Սիրելիի մահից յետ ,
Ե՞րբ ես տեսել , որ այրին ,
Ոտից ց' գլուխ պըճնուի ,
Իւր զարդերով թանկագին :

«Որի՞ համար զարդարուիմ ,
Որի՞ աչքը հրապուրեմ .
Շատերն՝ ինձ են ատելի ,
Շատերին՝ ես օտար եմ :

«Իմ ազգակիր գիժ քուռը ,
Թէ եւ այրի ինձ նըման .
Ըստրկօրէն տանում է ,
Գայթակղիչի կուռ շղթան :

Բայց նա ինձ չէ օրինակ ,
Ես Հայ հայիս կը ճանչնամ .
Օտար փեսայ չուզելով ,
Ես միշտ այրի կը մընամ :

Կա՛ր ժամանակ , որ ես էլ ,
Շքեղազարդ հարսի պէս .
Հազար ու բիւր պչըանքով ,
Փախչում էի ափերէս :

Յատակս պարզ ու վճիտ ,
Կոհակներս ոլորուն .
Լուսաբերը մինչեւ ցայդ ,
Զըրիս միջին էր լողում :

Ի՞նչս մնաց այն օրից,
Ո՞ր ջրամօտ գեղերս .
Ո՞րը իմ շէն քաղաքից ,
Ո՞ր բերկրալի տեղերս :

Տուրքը ջրի ամէն օր,
իր սուրբ ծոցէն Արարատ .
Մայրախնամ ինձ սնունդ ,
Պարգեւում է լիառատ :

Բայց ես այն սուրբ ջրերով ,
Սուրբ Ակորի աղբերին .
Պիտի ցողեմ արտօրայքն ,
իմ ատելի օտարին :

Կամ կենաատու իմ ջրով ,
Ափերիս մօտ կըկըզած .
Իր ձեռքերը լուանայ
Գող, աւաղակը հոտած :

Մինչ իմ որդիք — ո՞վ գիտէ — ,
Մարաւ, նօթի, անտէրունչ .
Օտար աշխարհ յածում են,
Թոյլ ոտքերով կիսաշունչ . . . :

Հեռո՛ւ հեռո՛ւ քշեցին ,
Բնիկ ազգը իմ Հայկեան .
Նոցա տեղը ինձ տուին ,
Անգութ խուժանըն Պարսկական :


Դոցա՞ համար զարդարեմ ,
Իմ հիւրընկալ ափերը .

Եւ կամ դոցա՞ հրապուրեմ ,
Ճպոստ, պլած աչերը :

Քանի որ իմ զաւակունք ,
Էսպէս կու մընան պանդուխտ .
Զիս միշտ սգաւոր կը տեսնէք ,
Այս է անխար իմ սուրբ ուխտ » . . . :

Եւ չխօսեց Արաքսը ,
Ցործանք տուեց ահագին .
Օղակ օղակ օձի պէս ,
Առաջ սողաց մոլեգին :

*ԱՄԱՆ-ՔԱԹԻՊԱՅ



Ի ՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳ

«Մեր հայրենիք թըշուառ, անտէր ,
Մեր թըշնամեաց ստնակոխ ,
Իւր որդիքը արդ կանչում է
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ :

«Մեր հայրենիք շըղթաներով
Այսքան տարի կապկապած ,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած :

«Ահա՛, եղբայր, քեզ մի դըրօշ
Որ իմ ձեռքով գործեցի ,
Գիշերները ես քուն չեղայ ,
Արտասուքով լուացի :

«Նայի՛ր նորան , երեք գունով՝
Նուիրական մեր նըշան
Թո՞ղ փողփողի թըշնամոյն դէմ ,
Թո՞ղ կործանուի սէգ հըսկան :

«Ինչքան կին մարդ , մի թոյլ էակ ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը ,
Զանց չարեցի քո սիրուն :

«Ահա՛ իմ գործ , ահա՛ դըրօշ ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս ,
Գլնա՛ փըրկել մեր հայրենիք ,
Պատերազմի վառ հանդէս :

«Ամենայն տեղ մահը մի է ,
Մարդը մի անգամ պիտ' մեռնի ,
Բայց երանի՛ , որ իւր Ազգի
Ազատութեան կը զոհուի :

«Գլնա՛ , եղբայր , Աստուած քեզ յոյս ,
Ազգի սէրը քաջալեր ,
Գլնա՛ թէեւ չեմ կարող գալ ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր :

«Գլնա՛ , մեռիր դու քաջի պէս ,
Թող չը տեսնէ թըշնամին
Թու թիկունքը , թող նա չասէ
Թէ վատ է իտալացին :»

Ասաց , տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դըրօշ ,

Մետաքսից էր , ազնիւ գործած ,
Ուր երեք գոյն կար որոշ :

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քընքուշ քոյր ,
Առաւ զէնքը , սուր , հըրացան ,
Հեծաւ իւր ձին սիւաթոյր .

«Քուրիկ , —կանչեց քաջ պատանին ,—
Մընաս բարեաւ , սիրական ,
Այս գրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան :

«Նա սուրբ է ինձ , երբ մըկրտուած
Արտասոււքով ու կընքած ,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ ,
Հայրենիքի նուիրուած :

«Թէ մեռանիմ , դու մի՛ ուզգար ,
Իմացի՛ր որ տարեցի
Դէպ ի մահու արքայութիւն ,
Իմ հետ քանի թըշնամի :»

Ասաց , վազեց դէպ ի հանդէս
Աւստրիացոց յանդիման ,
Իւր արիւնով գընել յաւերժ
Ազատութիւն իտալեան :

Ո՛հ , իմ սիրտը կըտրատվում է
Տեսանելով այսպէս սէր ,
Դէպ ի թըշուառ մի հայրենիք
Որ ոտնակոխ եղած էր :

Սորա կէսը , կէսի կէսը ,
Գէթ երեւէր մեր ազգում .
Բայց մեր կանայք ... ուր , Եղիշէ ,
Ուր մեր «Ճիկնայք փափկասուն :»

Ո՞ւ ... արտասուք ինձ խեղդում են ,
Այլ չեմ կարող բան խօսել .
Զէ՛ ... թըշուառ չէ իտալիան ,
Եթէ կանայք այսպէս են :
Թարգմ . յիտալ . կոմս Էմմանուէլ
Մ. ՆԱԼԻՐԱՆԴԻՍՆՑ



ՀԱՅՐԻԿՃԱՆ

Եկել է դարուն , սոխակը սիրուն
Վարդի թփի տակ , Հայրիկճան ,
Երգէ հայրենիք :

Միծեռնակ , բազէ , թըռչունք համօրէն ,
Քաշում են միշտ ա՛խս , Հայրիկճան ,
Օտարաց երկրէն :

Կռունկ մեր պանդուխտ իւր բարձր դիրքով ,
Փութայ ձայն տալ մեղ , Հայրիկճան ,
Հայրենեաց սիրով :

Վասպուրականի երիտասարդներ ,
Եւ օրիորդներ , Հայրիկճան ,
Սեւեր են հագեր :

Պատանիք , մանկունք , Օրիորդք , կուսանք ,
Հայրիկ կանչելով , Հայրիկճան ,
Քաշեն հառաջանք :

Մեր սիրան ու հոգին քու հոգւոյդ զուրպան ,
Հրեշտակ Հայ ազգի , Հայրիկճան ,
Դարձիր Հայաստան :

Մեր սիրան ու հոգին դու մորմոքեցիր ,
Քաղցր ու անուշիկ , Հայրիկճան ,
Թողիր վնացիր :

Վոսփորի ափեր , գիտեմ , չես սիրում ,
Վարագայ վանքիդ , Հայրիկճան ,
Կարօտ ես քաշում :

Հրաժարական քարոզըդ տուիր ,
Խեղճուկ սրտերնուս , Հայրիկճան ,
Կրակ վառեցիր :

Իսկ Երկուշաբթի , որ օրն էր Աւագ ,
Ի Սուրբ Յակոբէն , Հայրիկճան ,
Դառնայիր Արագ :

Ուր որ ալ լինիս , ուր որ ալ երթաս ,
Քու փայլուն ջահէդ , Հայրիկճան ,
Մեղի լոյս կուտաս :

Եւրոպ ճանաչէ քու բարձր արժանիք ,
Մինչ քու կարօտովդ , Հայրիկճան ,
Կ'այրինք տոչորինք :



ԵՐԳ

ՆԱՇԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Աղատութեան սիրոյն համար շատ արիւններ թափ-
ուեցան

Անմեղ հայրեր ու զաւակներ եկան այստեղ թաղուե-
ցան : (Կը ինք)

Ահա եղբարք ես ալ կերթամ Ազգիս համաւ մեռնելու
Աղատութեան սիրոյն համար ամբողջ կեանքս զո-
հելու :

Գերեզմանիս հողին վրայ թափէ արցունք հայր և մայր,
Սփռէ ծաղիկ բուրումնաւէտ նահատակ եմ ես յաւէտ :

Ահա այսօր Հայ եղբայրներ կուգան այստեղ ողբալու
Նահատակաց հողին վրայ աղի արցունք թափելու :

Ո՛վ եղբայրներ դուք ալ ելէք գերեզմանին խորերէն,
Ուրախացէք և ցնծացէք Աղատութեան գոչերէն :

ՄԱՂԹԱՆՔ

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան
Եւ արժանի անոնց հոգին երկնից Սուրբ արքա-
յութեան :

ԱԼ Ա. Ր Պ Դ Ա Ն

Իմ հայրենեաց հոգիս Վարդան,
Հոգիս Հոգւղի եղնի զուրպան,
Որ Տըղմուտի ափերի քով
Վաթուուն հազար կտրիճներով
Զարկիր, զարկուար, ինկար՝ քաջ քաջ,
Պարսիկք որփուած ի ձախոդ ու յաջ :

Իմ հայրենեաց հոգիս Վարդան,
Հոգիս հոգւղի եղնի զուրպան :

Աւետարան ու Խաչն առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր .
Եւ գու ալ յետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուրիր,
Որ հայրենեաց շողայ արեւ,
Շաւարշանի դաշտին վերեւ :

Իմ հայրենեաց արեւ Վարդան, Ան :

Արիւնդ կարմիր կարմիր թափուաւ,
Դաշտն ու ծաղիկ ներկուեցաւ .
Լուսնակն եկաւ ամպի տակից
Պաղ պաղ թափեց ցողիկն յաջից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Երգէ պըլպոււ դրախտի սարին :

Իմ հայրենեաց արեւ Վարդան, Ան :

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կընքեր է մեզ Պատմութեան էջը.
Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն Երկինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Հայ ապրինք. — Մեր հայրն է այն Դիւցազուն
Որ զԱզատութիւն սովորեցոյց մարդուն,
Ու մեզ վեհ անուն մը տըւաւ բաժինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Մեր աշխարհն է ո՛ւրբ : — Մեր հողուն վըրան,
Աստուած է քալեր, հանելով զԱզամ.
Լեզուն ստեղծեր ու խօսեր է նախ ինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան.
Երկիր փրկութեան է մերս Հայատան,
Կըրօնից նախկին սեղան է Մասիք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Հայուն պերճ անուն՝ ո՛չ միայն յերկիր՝
յեթե՛րց մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղք անմա՛հ են յերկինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Հայ ապրինք. — Ո՞ր ազգ կայ Հայուն նըման,
Որ ունենայ հին պարծանքներ այսքան,
Ո՞ր ազգ Հայուն պէս շըքեղ Հայլենիք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Ըսէք, ո՞ր Ազգին չորս առաքեալներ
Երկնից թագաւորն է դե՛սպան զրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Ո՞վ կըրնայ համրել Սըրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է Նահատակաց ցա՛նկ.
Մեր եկեղեցին յերկրի է Երկինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնենք,
Հաւատոց եղանք միշտ ախոյեան մե՛նք.
Հայը զարմացոյց զերկիր և զերկինք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Մեր ազգ հետեւող է ճիշդ Յիսուսի,
Որ Խաչն այսչափ դար առած յուսի.
Ո՛չ, չը խոնարհիր չը՛լար դասալիք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Այս' Խաչին կեանք՝ կեանք է վըշտալից,
Այս', Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից.
Բայց Խաչն՝ յաղթութիւն ունի վեհ կընիք. —

Եղբարք, Հայ ապրինք :

Մեր քաղցր Հայրենիք, մեր թագ, գտւազան՝
Ամպեր են ծածկեր Սրբւի նըսան.
Յուսացէք, արեւ կու տար մեղ Երկինք. —

Եղբարք, Հայ ապրինք:

Ո՛չ ճակատագիր մեր չէ միշտ տըխուր՝
Ըզթշուառութեան ուտել հացն ու ջուր.
Նոր երջանկութեան ապագայ մունինք . . .

Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք. — Օր մը յաղթական մահուն
Պիտի բարձրանայ անմահ Հայութիւն . . .
Ո՛հ, այն օր մեզի շուտ ծագէ, Երկինք . . .

Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք, որ մեր որդիք ալ, եղբարք,
Կարենան պարձիլ որ զմեզ ունին հարք.
Քըլանք Հայ անուտն չըլլանք նախատինք. —

Եղբարք, Հայ ապրինք:

ԽՈՐԷՆ ԵՊԻ. ՆԱՐ-ՊԵՅ

ՍԱՍՆՈՅ ԿՈՏՈՐԱԾ

Սասուն ելաւ ապստամբեց
Աշխարհի մէջ հանեց թունդ
Ամերիկա, Եւրոպ ցնցեց:
Քաջաց բանակն գունդագունդ:

Հայոց սրոտեր թրթռացին
Հայու ձայնը որոտաց
Կըտրիճք յառաջ շուտ խաղացին
Ազատութիւնը թնդաց:

Ախ, Սասունցիք, քաջ Սասունցիք
Զեր արիւնին մենք զուրպան
Հնչակեան սուրբ սերմեր ծըլին
Ազատութեան մենք զուրպան:

Քուրտը տեսաւ և կատաղեց
Զօրքեր հանեց բիւրաւոր
Յիսուն հազար զօրքեր կանչեց
Արիւնարբու, զօրաւոր:

Եւ Սասունը պաշարեցին
Այն վայրենի քիւրտերը
Թնդանօթներ որոտացին
Քարքանդ ըրին գիւղերը:

Ախ, Սասունցիք, քաջ Սասունցիք:
Զեր արիւնին մենք զուրպան
Ախ սուրբ հողիդ անմահ որդիք
Դիակներնուդ մենք զուրպան:

Մօր արգանդը վատը պատռեց
Գլուխներ անցուց նիզակով
Մինչ վերջին շունչ Սասուն կռուեց
Ազատութեան կարօտով:

Եւ արիւնը գետի նման
Թրջեց Սասնոյ վեհ սարեր

Հայք բիւրաւոր կոտորուեցան
Գարշ բռնութեան սուրբ զմհեր :

Ա՛խ , քիւրտ ու վատ բռնաւորներ
Նզովք ըլլայ ձեր գլխուն
Միշտ կարիճ են Սասունցիներ
Նզովուի , Զէքի՛ , քո անուն :

Եւրոպ տեսաւ ցնցեց անդէն
Ապշած նայեց Հայերուն
Տեսաւ վիճակ գէշ է թուրքին
Եւ խորհեցաւ շահերուն :

Հայու արեան չը հաւատաց
Եւ յանձնախումբ մը ծնաւ
Թուրքն ալ առաջ ինկաւ ինդաց
Ջիւնոտ լեռներ ցոյց տուաւ :

Ա՛խ , Եւրոպա , մօր մը պէս խորթ
Հայ գիակնե՞ր կը ծաղրես
Թուրքին կ'ընարես քեզ առաջնորդ
Այս ի՞նչ կատակ մեզ կ'ընես :

Կեցցէ՛ կուիւ , կեցցէ՛ արիւն
Այս է ճամբան միշտ մեղի
Մեր արիւնը Եւրոպային
Անշուշտ թէ քիչ կը թուի :

Ազատութեան համար անմահ
Թող ելէ ողջ Հայաստան
Մեր արիւնով է մեզ ներկած
Շահախնդիր Եւրոպան :

Ասատոնցի կին , Ասատոնցի քոչ
Զեր արիւնին մենք դուրպան
Հնչակեան սուրբ սերմեր ծլին
Ազատութեան մենք դուրպան :

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ

ԶԷՅԹՈՒՆՑԻ ՊԱՏԱՆԻՈՅ

ԵՐԳ

Դու զ՞վ ինդրես մայր իմ անուշ ,
Ե՛կ մի գողար , մօտեցիր հոս .
Անլաց աչօք գիտէ զորդիդ ,
Ու իւր վէրքերն արիւնահոս :

Քրդաց մայրեր թող լան , ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն :

Ի՞նչպէս երեխն օրրանիս մէջ ,
Կալուղ ձեռամբ փայփայելով .
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր ,
Իբրեւ հրեշտակ նուագելով :

Զիս հանգչեցուր 'ի հող , ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն :

«Եորեկ որդւոյս կենաց արեւ ,
Զեղի համար փայլի Հայե՞ր» .
Այսպէս յայնժամ դու երգէիր ,
Օրօրօցիս նստեալ քովեր :

Անոնց համար շիջաւ, և դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն,

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,
Սակայն, մայր իմ նայէ չո՛րսղիս.
Զարիւնուշտ Քիւրտերն տե՛ս,
Հազարներով փռուած գետին:

Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ինչպէս վիշտապ մըռընչելով,
Թանկարծ մեր վրայ յարձակեցան.
Ցնցեց Զէյթուն գլուխն ժայռոստ,
Իւր վհից մէջ թօթափեցան:

Կարմիր ներկաւ քորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ստուերն,
Զի չէ մեռած Հայոց կրակ.
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վտակ:

Խնդաց Մասիս, մայր իմ, և դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Վերջին համբոյր տամ քեզ մայրիկ
Հատուցանես զայն սիրուհւոյս.
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ոյր արդ կ'իջնեմ ի ծոցն անլոյս:

Խաչ մի տնկէ վըրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար 'ի Զէյթուն:

Խ Ր Ա Խ Ո Յ Ս

Հերիք, որդեակք, այսքան տարուան տառապանք
Հերիք անգութ գաժան քրդին ոտքն ինկանք
Գանի՛ խոնարհ գլուխ դրինք գայլերին
Այնքան ծանըր բեռներ դրին մեր վզին:
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հայ քաջերից արիւնից ենք և ազատ
Թէեւ չունինք ո՛չ սուր, ո՛չ թուր, ո՛չ նիզակ
Մեր բահերն էլ կանեն նրանց շան սատակ:

Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի
Նըրանք մարդ չեն այլ լեռնական վայրենի
Մերն է ձիրքը, մերն է ուսումն ու հանձար
Մերն է հողը, մերնք ենք նրա տէրն արդար:
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք հարազատ ևն:

Նրանց են մեր կոյս աղջիկներ, հարսունքը,
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը,
Նրանց սուրի ծալըն է կարծես մեր հոդին
Նրանց գամփուլ մեղնից շատ է թանկագին:
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, ևն:

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում
Նոքա մեր վրայ լոիկ արցունք են թափում
Զեն խնայել թեւ ու թիկունք, կը հանին,
Շուտով կուգան կը միանան Սուրբ Գործին:
Հերիք, ելնենք ցոյց տանք թէ մենք, ևն:

ՀՅԱՂԱՐՁԱԿ ՀԱՅԼԱԿԱՆ ՄՐԳԱՐԱՆ

ԵՐԻ Գ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆ Է Ի

Հիմի՞ էլ լըռենք, եղբարք, հիմի՞ էլ,
երբ մեր թշնամին իւր սուրն է դըրել.
իր օրհասական սուրը, մեր կըրծին,
Ականջ չի գնում մեր լաց ու կոծին.
Ասացէ՛ք, եղբա՛րք Հայեր, ի՞նչ անենք,
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,
Դաւով, հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջընջեց աշխարհքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգումայ տունը.
Խըլեց մեզանից թագ, և խօսք, և զէնք,
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,
Խըլեց մեր սուրը — պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խըլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կըռեց.
Վայ մեզ, շղթայով կապած գերի ենք,
Հիմի՞ էլ լըռենք.

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,
Սոսկալի զէնքը բըռնած մեր գըլմին.
Կուր տալ է տալիս արտասուք առատ,
Աղէխարչ բողոք վարուց ապիրատ,
Մեր գլուխ լուալու Եփրատ ո՞ւր փնտոենք,
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,
Լիրը գոռոզութեամբ լցրած էր հոգին.
Արդարութեան ձայնն հանած իր սրտից,
Արտաքսում է մեզ մեր բընիկ երկրից.
Պանդուխտ, հալածեալ, եղբա՛րք, ո՞ւր դիմենք,
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,
Անգոհ մեր բերած ձանը զոհերին.
իւր վիրը, նըզոված ձեռքը կարկառեց,
Ազգութեանս վերջին կապը պատառեց.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհէլով մեր փառքն ազգային.
Մեր Եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գայլազգեստ գառին մեզ գըլուխ դըրաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր ազօթենք,
Հիմի՞ էլ լըռենք:

Հիմի՞ էլ լըռենք, մարդիկ ի՞նչ կ'ասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն.
Զե՞ն ասիլ որ Հայք արժանի էին,
Այդ ստըրկական անարդ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչեւ Ե՞րբ լըռենք:

Թո՛ղ լըռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցը է թըշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ,

Եկ անվախ ելնենք թըշնամու առաջ .
Գոնէ մեր փառքը մահով յետ խըլենք ,
Ու այնպէս լըռենք :
Ո. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ



Ա Յ Ա Յ Ա Յ

Հեռաւոր երկիր նըստած դու նժդեհ
Հայրենիեաց բաղդին մօտուստ ես տեղեակ
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ :

Նոր գաղափարի քո ցանած սերման
Ազնիւ պտուղներն հասուննան արագ
Կարին և Պոլիս որոտման նման
Անդրանիկ շարժմունք ծնան քեւ , Հնչակ :

Զար բռնութիւնը՝ Հայոց կեղեքիչ
Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ
Խուլ Եւրոպայի թնգաց մէն գահիճ
Հայը ցնցուեցաւ , կարմրեցաւ Հնչակ :

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա
Հասած կարմըրին արեան նմանակ
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք , Հնչակ :

Կոչնակդ հնչեցուր , հնչեցուր արագ
Թո՛ղ Հայք ստք ելնեն ծագէ մինչեւ ծագ
Փըշրի ծանր շղթայն , ծագէ նոր արեգ
«Ազատ ենք» հնչէ , սոկոզ' ծ Հնչակ :

ՊԵՐՃ ՄՈՒՃԼՈՒ

Ա Յ Ա Յ Ա Յ

Երբոր բացուին գռներն յուսոյ ,
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ .
Զքնազ երկինս մեր Արմենիոյ .
Երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր :
Երբոր ծիծառն ի բոյն գառնայ ,
Երբոր ծառերն հագնին տերեւ .
Ցանկամ տեսնել զիմ կիլիկիա ,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Տեսի դաշտերն Սիւրիոյ ,
Լեառն կիրանան և իւր մայրեր .
Տեսի գերկիրն իդալիոյ ,
Վինետիկ և իւր Կոնտոլեր .
Կղզի նման չիք մեր կիպրեայ ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ .
Ցանկամ տեսնել զիմ կիլիկիա ,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Հասակ մը կայ մեր կենաց մէջ ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի .
Հասակ մը ուր հէզին ի տենչ ,

Յիշատակաց իւր կարօտի .
Յորժամ քնարս իմ ոըրտանայ ,
Սիրոյն տալով վերջին բարեւո .
Երթամ նընջել յիմ կիլիկիա ,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ :

Դ. ՌՈՒՍԻՆԵՍՍՆ



Գ Ա Ր Ո Ւ Ն

Ո՞հ , ի՞նչ անուշ և ի՞նչպէս զով ,
Առաւօտուց փըշես հովիկ .
Ծաղկանց վըրայ գուրգուրալով ,
Եւ մազերուն կուսին փափկիկ .
Բայց չես հովիկ իմ Հայրենեաց ,
Գնա՛ անցիր ոըրտէս ի բաց :

Ո՞հ , ի՞նչ աղու և ոըրտագին ,
Ծառոց մէջէն երգես թըռչնիկ ,
Սիրոյ ժամերն ի յանտառին ,
Ըզմայլեցան ի քո ձայնիկ .
Բայց չես թըռչնիկ իմ Հայրենեաց ,
Գնա՛ թոփ'ր ոըրտէս ի բաց :

Ո՞հ , ի՞նչ մրմունջ հանես վըտակ ,
Ականալիտ և հանդարտիկ .
Քու հայելոյդ մէջ անապակ .
Նային զիրենք վարդն ու աղջիկ .
Բայց չես վըտակ իմ Հայրենեաց ,
Գնա՛ հոսէ՛ ոըրտէս ի բաց :

Թէպէտ թըռչնիկ և Հովի Հայոց ,
Աւերակաց թըռչին վերայ .
Թէպէտ պըղտոր վտակն Հայոց ,
Նոճիներու մէջ կը սողայ .
Նոքա՝ հառաչք են Հայրենեաց ,
Նոքա չերթան ոըրտէս ի բաց :
Մ. ՊէտիկթԱՇԼԻԱՆ



ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԵԾ ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի՞ էլ խօսենք , եղբարք , հիմի՞ էլ ,
Երբ ընտանեկան երկպառակութեամբ ,
Ուրիշ բան չունինք , բայց իրար դաւել ,
Եւ սարսափելի ազգուրացութեամբ .
Մեր նախնեաց ուխտը ոտքով կոխել ենք ,
Հիմի՞ էլ խօսենք :

Հիմի էլ խօսենք , երբ քաջն Վարդան ,
Վաթսուն հազարից , հազարով մնաց ,
Մինչ մնացել էր Պարսից լոկ Մատեան ,
Գունդը , մեր վաթսուն հազարի գիմաց .
Երբ մեր վատութեամբ՝ ողջ կորուսել ենք ,
Հիմի՞ էլ խօսենք :

Հիմի՞ էլ խօսենք , երբ օտարից շատ ,
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում .
Մոխրատնով լցինք , Դուին , Արտաշատ ,
Ծխի մէջ կորաւ ինան եկեղեցուն .
Երբ այս ամէնք մենք կատարել ենք ,
Հիմի՞ էլ խօսենք :

Հիմի՞ էլ խօսենք, երբ հրապարակում,
Պարսիկը առակ է արել Հային.
«Եթէ Ասորու նման աշխարհում,
Զկայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,
Էլ վատ է Հայլ» . մենք այս տա՞նումենք,
Հիմի՞ էլ խօսենք :

Հիմի՞ էլ խօսենք, երբ իշխանութիւն,
Մախում է անարդ հացկառակներին,
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին,
Եւ մեղ կարծում են հող իրենց ոտքի .
Ու մենք մեղ կոխող ոտքը լիզումենք,
Հիմի՞ էլ խօսենք :

Հիմի՞ էլ խօսենք, երբ կուսաւորչի,
Բնիկ ժառանգի թեւերը կտրած .
Անարդ Պարսիկը այս ու այն թեմի,
Կարգումնն այսօր ըստ իւր չար մտաց .
Եւ մենք դեռ «Կեցցէ արին» գոռումենք,
Հիմի՞ էլ խօսենք :

Հիմի՞ էլ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չըքերին .
Որ դրան շուն են, և մեղ տեսնելիս,
Շուտ դիմակները դնում երեսին .
Այդպիսիներին դարձեալ պատվում ենք,
Հիմի՞ էլ խօսենք :

Էլ մեր երեսին չմնաց մի կաթիլ,
Ամօթի սուրբ ջուր որ բերան բանանք .

Ոչ թէ չենք ուզում հողից հող կորչիւ,
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք .
Ազգ, Եկեղեցի փրկենք ազատենք,
Ազա թէ խօսենք :
Մ. ՆԱԼԻԱԽՆԵԱՆՑ

Մ Ա Հ Ա Մ Ե Բ Ջ Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Է Բ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ
Բայց հանգիստ եմ ես հոգւով .
Իմ թըշնամիքըս ես օրհնում եմ, —
Օրհնում եմ քեզ Աստուծով :

Հեռանում եմ, անգին ընկեր,
Զըշնահատած ոչ ոքից,
Բայց հաւատահաւ անձնանուէր,
Ազգիս մըշակ կը հաշուիմ :

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւաճան ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ Հայրենիք, —
Գընա՛ և դու նոյն շաւղով :

Խեղճութիւնը Հայոց ազգի՝
Կարեկցաբար մըտածի՛ր,
Ոսկեգրքոյկն Եղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրի՛ր :

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան
Ազատ կամքով ու խըղճով,

Այնտեղ վարդան, անմա՞հ վարդան՝
իւր խճկելի քաջերով:

Հայրենիք, — սեղան սըրբութեան —
Ես՝ Աստուծոյ առջեւ
Շատ կ'աղաչեմ, շատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արեւ:

Իմ մըտերիմ, մահըւ մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով,
Որովհետեւ խիզս արդար է,
Ճըշմարտութեան ջատագով: —
Ա. ՇԱՀԱԶԻՉԵԱՆՑ

ՀԱՅԵՐՈՒԽ ԹՈՒՔԸ

Դուն խելօք, հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք, կ'ասեն, շատ ունես.
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ վըրան:

Քաջ ես, լըսել ենք, ինքսդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր.
Բայց թէ թըրէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, թըրիդ ալ վըրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փըռուած է.
Բայց թէ գրչէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, գրչիդ ալ վըրան:

Հեռատես մըտքով դուն զարդարեցար,
Հըզօր իշխանին սիրելին գարձար.
Բայց թէ մըտքէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, մըտքիդ ալ վըրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թամկագին բաներ.
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ձեռքիդ ալ վըրան:

Երկինք չնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հըռչակ ու հանձար.
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, լեզուիդ ալ վըրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լցուած է մարդոց բերան.
Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ, ուսմանդ ալ վըրան:
ԳԱՄԱՂ-ՔԱԹԻՊԱ

Ա. Ն Դ Ր Ա. Ն Ի Կ Ի Մ Ա. Ռ Շ

Դաշնակցական խումբ գնանք մենք Աստուն,
Մեր Հայ եղբայրներ մեղէին սպասում.
Անդրանիկը քաջ իւր թընկերներով,
Կուզէ պատերազմ, կ'ոպասէ գարնան:

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,

Հայերը անվախ հոգւով միացած
Հրացան ամբողջ ոտքի են կանդնած :

Խմբապետները հոգւով են երգուած .
Ֆէղայի ուժով գնում են առաջ .
Առաջ է կանգնած Անդրանիկը քաջ ,
Գոռում է գոչում , կուզէ պատերազմ :

Հերիք եղբայրներ մենք շատ քնիցինք ,
Բաւական չէ՞ մեզ լայսքան համրերինք .
Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք ,
Հիմայ ուժ ունինք դարձեալ հո կ'առնենք :

§

Հայ եղբայրներ թէ կոնքի գանք ,
Արեան դաշտը մենք նետուինք ,
Սուրը ձեռին հուրը կուրծքին ,
Սառած սրտեր փորփոքենք :

Արեւելքից լոյս է ծագում
Եւ Հայաստանի ուժգին ցնցում , օն ,
Օ՞ն յառաջ օ՞ն մարտ
Օ՞ն ի հրազայր մեր արիւնով մեր արիւնով
Ճամբայ բանանք Հայ եղբարք , ճան եղբարք
Թշնամու դէմ մենք ոլանանք ,
Հեղեղի պէս փոթորկի պէս լուայ արիւնով
Ներկեր ներկենք պիղծ դիակով դաշտեր
պատենք .

Թող գնդակի տարափ թափի
Թող մեզ մահը անարդ լափի
Թշնամուն դէմ մենք ոլանանք

Հեղեղի պէս փոթորկի պէս
Լուայ արիւնով ներկեր ներկենք
Պիղծ դիակով դաշտեր պատենք :
Թող վերջապէս տեսնէ Վաթան
Պարզուած դրօշը ազատութեան .
Թող վերջապէս տեսնէ Վաթան
Պարզուած դրօշը ազատութեան :

Ա Ր Ե Ա Լ Ո Յ Ս

Վարդեր ու վարդեր
Թերթ ի թերթ փըթթեր ,
Ի կապոյտ եթեր
Զիւնափայլ ամպեր՝
Քայլերուդ առջեւ
Սըփոելով թեթեւ ,
Քեզ՝ բընութեան հետ՝
Յայս ժամ հեզաւէտ՝
Մընան մեծայոյս ,
Ո՞վ քաղցր Արշալոյս :

Ահա շող ի շող
Շուշանաց ի քող ,
Զիւր ոսկենըշոյլ
Վարսեր հոյլ ի հոյլ
Ծուփ ի ծուփ ի սփիւռ՝
Թողլով ի զեփիւռ ,
Եւ մարգըրտայեռ
Պարզելով թեւեր՝
Նազի Արշալոյս ,
Երկընքին այն կոյս :

Ահա վառ ի վառ
Ճակատուն գոհար,
Եւ բըբերն անուշ
Քըթթելով քընքուշ,
Զերկին և զերկիր
Գըրգէ սիրալիր.
Շըրթներուն իւր վարդ
Ի ժըպիտ զըւարթ՝
Ծաղկանց թոյր ի թոյր
Հեշտից ցօղէ բոյր :

Ահա սոյլ ի սոյլ
Թըռչնեկացըն բոյլ,
Ճըռուսղեն ընդ բոյս՝
Ո՞ղջոյն Արշալոյս.
Ո՞ղջոյն ո գմըռայլ
Փոխարկես ի փայլ,
Ու զտըխուր երկիր
Գործես ցընծալիր.
Ո՞հ, յէից ողջոյն՝
Արշալոյս, ողջոյն :

Քեզ ամէն ոք տայ
Զիւր ձօն նախընծայ,
Քեզ՝ ըզփափկագոյն,
Քեզ՝ ըզսըրբագոյն.
Քեզ ամպ, սիւք, վըտակ,
Ծաղկունք և սոխակ,
Ամէնք տան քեզ գով
Հալին քո սիրով,
Ո՞վ երկնային կոյս,
Սիրուն Արշալոյս :

Ո՞հ, դու որ այսպէս
Մեր սիրտն զմայլես,
Մեր բըբերն աղօտ
Մի՛ թողուր կարօտ.
Երբ գերեզմանին
Ցաղամուղ փակվին . . .
Ա՛լ զանուշ քո լոյս
Եւ աչաց ոգւոյս
Շողշողա՛ ի յոյս,
Կուսա՞ն Արշալոյս :

Խ. Ե. ՆԱՐԴԵՑ



ԵՐԳ ԱԿԱՐԱՅՐԻ

Կոռւեցէք, տղերք, կոռւեցէք քաջ քաջ
Անվեհեր կանգնած թշնամւոյն առաջ,
Ճանկալի է մեզ միշտ աղնիւ մահը
Հեռու մեղանից ոսոխին ահը.

Յառաջ խիզախենք իբրեւ նահատակ,
Ի զուր թող չանցնին մեղնից մէկ գնդակ:

Ահա՛, քրդերը փախչին սարսափած,
Ահա՛, գիտիներ արեամբ շաղախուած.
Կրակ տեղացէք անդադար կրակ,
Փառք մեր զէնքերին առատ է գնդակ:
Այս անդամին ալ ցոյց տանք թշնամւոյն
Թէ ինչ է Հայսւ ոյժն ու քաջութիւն :

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կըսպասեն մեր հէգ եղայլներ.
Ազատ չը ծնանք, գէթ մեռնինք ազատ
Մեր սիրոն ու հոգին պահենք անարատ.
Դէհ կոռէք տըղերք մինչև շունչ վերջին
Արժանի լինել փառաց պակին:

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցէ, կեցէ Հայաստան,
Այսպէս յորդորեց և խնկաւ արին.
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.
Ահեղ կոռէի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալի կտրիմ Մարտիրոս:



Ո Ռ Ն Կ Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի

Բարով եկար դու սիրուն կոռւնկ,
Ինչ լուր բերիր հայրենիքէս,
Խօսի՛ր ինձ հետ ազատօրէն, Դ
Կեանքս կը նուիրեմ ես քաջ:

Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարուած գոյնը,
Նորա սիրուն տանջուած եմ:
Աչքերիցս կտրաւ քունը:

Ազատ տեսար մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը,
Այն լեռներու պաշտպանողը,
Արծւի, կորիւնի նետերը:

Տեսար՝ մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ Հմեխակ, շուշաններ շատ կան.
Եղեմական գրախտավայր,
Նա կոչում է՝ Հայաստան:

Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Միջազ ի՞նչ կ'սպասես ի զուր.
Րի առնեմ իմ թեւերուն,
Գնանք այնտեղ ուրախացուր:



ՀԱՅՈՒՆԻՆ Ե Բ Գ Ը

Նուիրուած Հ. Յ. Գաւենականներուն

Ազատութիւն եկուր հոս.
—Մեր փրկութեան հրեշտակ.
Հին ռէժիմէն բարբարոս
Ալ մի՛ թողուր յիշատակ:
Սփոփանքի շուքը բեր,
Քեզ կ'սպասենք անհամբեր.
Բընակութեանդ ենք տեղեակ,
Հոգիներնիս քեզ դըղեակ:

Ազատութիւն, քեզ տեսանք.
Հայոց Ազգն ա՛լ ապահով
Քեզ կը կարդայ գովաստանք
Հայրենաշունչ բառերով:
Կեանք, ինչք, պատիւ, արդար առւրք
Քեզ կը պարտին Հայ և թուրք:
Բընակութեանդ ենք տեղեակ
Մեր թուրքիսն քեզ դըղեակ:

Ազատութիւն քեզմով մենք
Պիտի ապրինք երջանիկ .
Ալ ուխտած հնք սէր մ'աննենգ
Բոլոր Հայ , Թուրք պատանիք :
Ատելութեան չունինք թոյն ,
Մեր գաշինքն է միութեւն :

Բընակութեանդ հնք տեղեակ
Խըգճատանքնի՛ս քեզ գըղեակ :
Թէ՛ղիւնկ



Յ Ռ Յ Ս

Ահա՝ կ'երթամ սիրելի մայր ,
Ազգիս համար մ'առնելու
Քաջ ընկերոքս ևս միասին ,
Անգութ քուրթելն ջարդելու .

Մի լար , մայր իմ , մ'ողբար , մայր իմ ,
Վերագրածիս ըսպասէ ,
Ազգիս հայոց ազատութեան ,
Տիւ և գիշեր աղօթէ :

Ահա կ'երթամ , սիրելի քոյր ,
Նպատակս է բարի ,
Զենք դիմանար մենք գերի ենք ,
Իբր վեց հարիւր տարի .

Մի լար , քոյր իմ , մ'ողբար , քոյր իմ ,
Վերագրածիս ըսպասէ ,
Ազգիս հայոց ազատութեան ,
Տիւ և գիշեր աղօթէ :

Ահա կ'երթամ , սիրելի հայր ,
Մնաս բարեաւ դու հիմայ ,
Այսքան ճընշման տակ ինկած է
Հայը ինչպէ՞ս դիմանայ .

Մի լար , հայր իմ , մ'ողբար , հայր իմ ,
Վերագրածիս ըսպասէ , ևն :

Ահա կ'երթամ , սիրելի կին ,
Քու արտասուք չը հոսէ ,
Պատերազմի գաշտին վըրայ ,
Իմ ընկերը կը սպասէ .

Մի լար , կին դու , մ'ողբար , կին դու ,
Վերագրածիս ըսպասէ , ևն :

Ով բարեկամք և ազգականք
Թողէք մեղի որ երթանք ,
Պատերազմի գաշտին վըրայ ,
Վէրքեր տանք ու ստանանք .

Մի լար , եղբայր , ևն :

Թէ յաջողիմ ողջ կը գառնամ ,
Այս ամէնը կը մոռնաս ,
Թէ պսակուիմ ես սուրբ մահով
Օր մը անշուշտ դու կուգաս .
Մի լար , մայր իմ , ևն :

Գերեզմանիս քարին վըրայ ,
Թափէ արցունք , ով մայրիկ ,
Թափէ արցունք , ցանէ ծաղիկ ,
Երիտասարդ եմ , մայրիկ ,
Մի լար , մայր իմ , ևն :

Սերաստիա երբ կ'երթայի
երկու օրէն գառնայի ,
երկու օրս ալ կ'ըլլար տարի ,
ես քեզ շատ կարօտնայի .

Մի լար , մայր իմ , են :

Կ'ելէի լեռանը վըրայ ,
Քար մը զարնէի գըլխուս ,
իմ գըլխուս եկած ձիւները ,
Մասեաց գագաթն ալ չըկայ .

Մի լար , մայր իմ , են :

Պարտէզիս մէջ երկու ծառ կայ
Տեսնողին զարմանք կուտայ
Հայ քաջերու արիւնովը
Կարծես ներկած ձիւղեր կայ :

Արդեօք այս մեր քաշածները
Պիտ' վերջացնես , ո՞վ Աստուած ,
Գուցէ ողջ ողջ պիտի տեսնենք
Հայ դրօշակը պլորդուած :

—————

ԵՐԳ ՕՐՈՐՈՅԻ

Մայրն

Անուշ քունիկն աչերն առեր ,
Անուշ հաղերն ալ տարուբեր .
Իմ տատրակիս քունն է եկեր ,
Անուշ երգով ըսեմ օր օր :

Որդին

Ես քուն չունիմ անգութ մայրիկ ,
Հերիք աչքս կապես , հերիք .

Մէկ պահիկէն կ'ընեմ պաճիկ ,
Իս արձըկէ , մ'ըսեր օր օր :

Մայրն

Մինչեւ չի լան մատաղ մանկիկ ,
Ծիծ չեն իտոր անոր Գա՛ռնիկ .
Դուն չի լացած իմ մէկ հատիկ ,
Ես ծիծ կուտամ , կ'ըսեմ օր օր :

Որդին

Խղճուկ սրտով ձայն եմ ձրգեր ,
Կը ճրգճըվամ , գուն չես լըսեր .
Մնուշ ձայնիդ ես զմալիեր ,
Ես կուլամ , գուն կ'ըսես օր օր :

Մայրն

Արցունքներդ մարգարտի պէս ,
Երեսդ ՚ի վար լինչ կը թափես .
Մի՛ լար , ձա՛գուկ , մի՛ լար , մեղք ես ,
Ո՞վ կ'ուզես , ան ըսէ օր օր :

Որդին

Գիրկդ ինձի հանգստարան ,
Ծիծերդ բերնիս անուշ ծորան .
Իրիկուան գէմ պառկիմ օրբան ,
Աչքս կապէ , ըսէ օր օր :

Մայրն

Քընացնեմ իմ աղաւնիս ,
Մեծացնեմ սիրով ոըրտիս .
Կարմիր վարդի նըման բացուիս ,
Շուքդ նըստիմ , ըսեմ օր օր :

Որդին

Քիչ մը թո՛ւլցուր թեւերս ոտքերս,
Ալ թշմրեցաւ փափուկ մըսերս.
Անուշ մրափն առնէ աչքերս,
Հապա սըխմէ՛ կարգա՛ օր օր :

Մայրն

Այդ սուտերովդ չեմ խաբուիր ես,
Կ'ուզես որ նըստեցնես.
Զի քընանաս, ծիծըս ուտես,
Դատա՞րկ տեղը ըսեմ օր օր :

Որդին

Քիչ մը ճոր ճոր, քիչ մը ճար ճար,
Քիչ մը տան տան, քիչ մը պար պար.
Քիչ մ'ալ գիրկըդ ա՛ռ հոպպա տա՛ր,
Քիչ մ'ալ մէն մէն, ետքը օր օր :

Մայրն

Աս քու լեզուդ կուտեմ հիմայ,
Քու կանգունովդ կըտաւ չիկայ.
Տան տան, մէմէ, ալ հարաբայ,
Աչակ պահ պահ, ըսեմ օր օր :

Որդին

Սիրտըդ քար է, ա՛լ հասկըցայ
Լացի լացի, շահ չի գտայ,
Ալ քնանամ, ճարը չիկայ,
Երկայն երկայն ըսէ օր օր :



Ի ՂԶ ՊԱՆԴԻՏԻՆ

Թէ թեւ ունէի
Ո՛հ, կը թոչէի
Աղատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին,
Անկէ ձեզ, Հայեր,
Կարդալի հրաւէր.
Թ'եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրեմք ընկեր զընկեր՝ սիրեմք կաթոգին :

Թէ դեռ լիմ արիւն
Զի խառնուիր թոյն,
Դեռ երակացըս մէջ աշխոյժ խաղային
Ո՛հ, քանի՛ հըպարտ
Կանչէի ազատ .
Թ'եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ ևայլն :

Թէ կեանք ունէի
Ո՛հ, կը լարէի
Թեւ քընարի բաղդին Հայոց անվենդան
Որ նա ձեզ խօսէր
Ձեզ, պանդուխտ Հայեր.
Թ'եկէք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ, ևայլն :

Թէ սէր ըլլայի
Կամ անմաշ հոգի,
Կը կապէի Հայոց սըրտերն անմեկին,
Յայնժամ և նոքա
Մի որդիք Հայկայ
Կ'ըլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին .
Սիրեմք ընկեր զընկեր սիրեմք կաթոգին :

Ա. Հ. ՖէլէկեԱն

ԵՐԳ ՌԱՄԿԱԿԱՆ

Կըռունկ ուստի՞ կուգաս ծառա՛յ եմ ձայնիդ,
Կըռունկ մեր աշարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի՛ վագեր երամիդ շուտով կու հասնիս,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Թողեր եմ 'ւ եկեր եմ մըլքերսո ու այգիս,
Քանի որ ախ կ'անեմ կու քաղվի հոգիս.
Կըռունկ պահ մի կացիր՝ ձայնիկդ ՚ի հոգի
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան լզջրի տօլապ.
Կըռունկ Պաղտատ իջնուս՝ կամ թէ ՚ի չալապ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Սրտելնիս կամեցաւ ելանք գընացանք,
Այս սուտ աս տընվորիս տէրտէրն իմացանք.
Աղու հացիեր մարդկանց կարօտ մընացանք,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աս տընվորիս բաներն կամաց կամաց է,
Եթէ Աստուած լըսէ գոնակն բացցէ.
Ղարիպին սիրտն է սուր՝ աչերն ՚ի լսց է,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աստուած՝ քեզնէ խնդրեմ մուրվէթ ու քէրէմ,
Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վէրէմ.
Կերած հացն է լեղի՝ ու ջուրն հարամ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Ո'չ զլուր օրըն գիտեմ ո՛չ ըգկիրակին,
Զարկած է զիս շամփուրն բոնած կրակին.
Այրիլս չեմ հոգար՝ ձեղնէ կարօտ եմ,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.

Հաւատով պառկեր եմ, ներքեւս է ֆըշակ,
Հոտոյն այլ չեմ գարչիր կը թըվի մուշկի.
Շատ հասրէթ մընացանք անկողնու տօշկի,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մը չունի՞ս:

Պաղտատու կուգաս՝ կ'երթաս ՚ի Սէհրատ,
Թղթիկ մի գրեր եմ տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վըկայ լինի քո վերադ,
Տարեալ հատուսցես զայդ իմ սիրելեաց,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Գրեր եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի,
Օրիկ մի օրերուն զաչերս չի բացի.
Սիրելի ձեղանէ կարօտ մընացի,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աշունն է մօտեցեր գնալու ես թէպտիր,
Երամ ես ժողովեր հազարաւոր բիւր.
Ինձ պատասխան չի տուիր ելար գընացիր,
Կըռունկ մեր աշխարհէն գընա՛ հեռացիր:

Այսօր զարիպութիւնն միակ միաւոր,
Հոգւով և մարմնով ես եմ մեղաւոր.
Սուրբ Սարգիս օգնական ճերմակ ձիաւոր,
Կըռունկ մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:



Բ Ա Ն Տ Ե Ւ Յ Ո Ւ Յ Ո Ւ Յ

(Վէրտիի «Նապուրքօյին եղանակով»)

Երազներուս ջինջ ոլորտն ասմազուն՝
Տենդոտ յուզմունքներ պատեցին համակ,
Սիրտիս ալքերուն պայծառութեան տակ,
Տակաւ մարեցան ցոլքելն երազուն։

Զերմին փափաքներ հոգիէս թըռան,
Հոն ձգելով լոկ ցուրտը մահերու .
Ու սեւ անուրջներ կցուած իրարու՝
Պատրանք մը գըրին հոգիիս վըրան։

Ալ սիրտիս խորքերն համակ մեզմոլոր
Մթին յոյսեր, սեւ բադանքներ ունին.
Ցուրտ սարսուռին տակ վճիտ մարմարին՝
Պիտի գաղըրին լոկ ցաւերըս բոլոր։

Ա՛լ թող թափթփին յոյսերըս վերջին,
Ա՛լ հոգիս մահուան ցաւը պարուրէ,
Էռոթիւնս արդէն հեշտին պահերէ,
Աւելի կ'ուզէ ցուրտը մարմարին։

Ա՛լ զովանալու պէտք ունի համակ,
Աւելի կ'ուզէ ցուրտը մարմարին,
Այդ ցուրտը մարմարին



Չ Ա Յ Ն Տ Ո Ւ Յ Ո Ւ Յ Ո Ւ Յ

Զայն տուր, ո'վ ծովակ, ինչո՞ւ լոռում ես,
Ողբակից լինել չկամիս գժբաղդիս,
Շարժեցէք զեփիւռք ալիքը վէտ վէտ,
Խառնեցէք զարտասուս այս ջրերի հետ։

Հայաստանի մէջ անցքերին վըկայ,
Սկզբից մինչ այժմ, ինդըրեմ, ինձ ասա,
Միթէ միշտ այսպէս պիտ' մնա՞յ Հայաստան,
Փըշալից անապատ երբեմն բուրաստան։

Արդօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Մասիսի գլխուն տեսնել մի զրօշակ,
Եւ ամեն կոմից պանդուխտ ազգայինք,
Դիմեն դէպի իւրեանց քաղցըր Հայրենիք։

Ո.Ա.ՃԸՐ

Ա Բ Ա Ա Տ Ղ Ն Ա Հ Յ Ր Ե Ն Ե Ա Յ

Մեր սիրուն հայրենեաց
Բեւեռը չողշողազ,
Մեր սիրուն քաջազմնց
Աճիւնակըն ցարդ հսկող,
Պայծա՛ռ աստղ, օր այժմիկ
Լոյս կ'ընես թափանցիկ։

Մինչեւ Հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս բոց .
Ո'վ քաղցըր Յոյս, գո՛ւ մխիթար
Տարագիր Հայոցս թշուառ .
Ի՞նչ աշխոյժ նոր ՚ի նոր,
Ի՞նչ աշխոյժ ոգեւոր

Կարծարձես սրտեսնուս,
Ով Հայոցս միակ թոյս :

Զէ՛, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Մեզ քաջալեր են Յոյս և ժամանակ.
Զէ՛, ալ չվհատինք բնաւ, ո՛վ Հայեր,
Ժամանակին հետ յառաջ ընթանանք.
Յառաջ ընթանանք հոն ուր հրաւէր,
Հրաւէր կարդան մեզ նախահարց աստղեր:

Թէ Հայկայ որդիք եմք,
Թէ Հայկայ արիւն կրեմք,
Ամենքո ալ ՚ի սուրբ սէր
Հայրենեաց ՚ի նուէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլամք միշտ արժանի:

Ս. Պ. Պ. ՓԱ.ՓԱ.ԶԵ.Ս.Ն




Մ Ա Ր Շ

Մնացես բարեաւ, սէր իմ սէր,
Հրաւէր մարտին որոտաց.
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զը կայ բաժին ինձ փառաց:

Մի՛ յար հոգւոյս իմ հատոր,
Գուցէ գառնամ, ո՛հ, մի՛ յար.
Թ՞ անկայց մարտին ես ՚իգոռ,
Տեսցուք յերկինս մեք զիրեար:

Եղբայրագաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի.
Ի սուրբ հողոյ Հայկազանց
Բառնամ ըզլուծ օտարի:



Ի ԹԱԳԱԼԻ ՈՐ ՈՒ ԹԻ ԻՆ ՏՐԴԱՑ

Յազատն ի վեր ի Մասիս,
Արիք, որդիք Հայկեան,
Ցրուեալք ի մի խումբ պարու,
Բառից հողմոց փող ազդու՝
Յաստուածախրախսոյս ձայն:

Նախնի կամար բազմերկեան
Ահա պատի գնովաւ.
Ցամպլոպայոյզ մըրըրկաց
Հաշտարան պատերազմաց
Տարփային ցոլացաւ:

Ձայն որոտաց, ձայն ահեղ,
Խորանաձեւ յարկէն.
Արիագունդ տուն Հայկայ
Ջտապալեալ գահիդ արքայ
Վերականգնեմ անդրէն:

Երգուեալ յաղեղն երկնածիր,
Բարձի զբաղդ ձեր ի միտս.
Թալթ ձեր յեթեր սըլացաւ,
Հակառակորդըն սոււազւ
Վայր սանդարամետս:

Դիւցազանց պար թորգոմեան,
Տըխրազգեաց յեղիսեանս,
Հզլըրթագոյն գիմաց մէգ
Աստեղաց բոց վառեն չէկ,
Յաւետեաց հրաւիրանս :

Արդ , իմ արի սպառազէնք ,
Տուք կայթս հոկայտաքայլ ,
Դաշտք ի պղինձ բոցացին ,
Լերինք ի նշոյլ շլասցին ,
Զոկատիցդ ի զեռալ .

Արա ձեզ Հայկ երկնաճեմ ,
Հայր ձերում բանակի ,
Ասպարագիակ հովանեաւ
Զեհօք ի բարձանց փարեցաւ ,
Անթափանց նիզակի :

Շուրջ պար առեալ զարքայիւ ,
Զօրավարք Արամայ ,
Բոլորեցք համերամ
Պսակ փառաց անթառամ .
Կեցցէ Տրդատ մեր արքայ :

Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ



ՀԱՌԱԶԱՆՔ

Նպատակիս համնիմ միայն ,
Թո՛ղ զիս հանեն կախազան ,
Կախազանէն խեղդուկ ձայնով ,
Պիտի գոչեմ , ա՞խ , Հայաստան :

Ա՛խ , Հայաստա՞ն , սիրոս ու հոգիս
Քեզ նուիրեմ , ընդունէ' ,
Թէ կարելի , թո՛ղ ես մեռնիմ ,
Վերականգնի , ա՞խ , Հայաստան :

Անոր սիրոյն բանտն ալ գըրուիմ ,
Պալատ է այն ինձ համար ,
Ոտքերս , ձեռքերս շըդթան զարնեն ,
Երջանկութիւն է ինձ ան ալ :

Թէ մինչեւ իսկ տքսորուիմ ալ ,
Թափառական կընէ զիս բախտ ,
Հայաստանիս սիրոյն համար ,
Փըշոտ վայրեր կ'ըլլան գըրախտ :

Ա՛խ , Հայաստա՞ն , գու սիրուն մայր ,
Մինչ երբ այսպէս քու որդիք ,
Քեզնէ հեռո՞ւ պիտ' հառաչին
Իսկ դո՛ւք , մինչեւ ե՞րբ թափառիք :

Ե՞րբ պիտի գայ իմ թագաւոր ,
Որ ես հասնիմ իմ ուխտին .
Դըրօշակներ ծածան ծածան ,
Ականակուռ թագի գըլլին :

Ա՛խ , Հայաստա՞ն , աչքըդ գարձուր ,
Քեզ փընտըռող որբերուն ,
Պէս պէս ցաւօք կը տանջուին ,
Դարման եղի՛ր հայ քաջերուն :

Վախնամ մեռնիմ ես այս ցաւով
Ու իջնեմ սեւ գերեզման ,
Գերեզմանէն մեռած ձայնով :
Պիտի գոռամ , վա՞խ , ՀԱՅԱՍՏԱՆ :



ԱՌ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ով մեծասքանչ գու լեզու ,
Ով հեշտ բարբառ մայրական ,
Փափկահնչիւն բառերուդ ,
Նման արդեօք այլ տեղ կա՞ն :
Դու նախ ինձ հընչեցիր ,
Նախ սիրոյ , ո՞հ , հեշտ խօսքեր .
Այն նախ ըզքեղ թոթովելս ,
Դեռ իմ մըտքէն չէ ելեր :

Իմ մայրենի քաղցր լեզու ,
Կեաց անսասան , կեաց յաւէտ .
Կեաց միշտ լեզուդ չայկարժան
Կեաց ծաղկալից ծաղկաւէտ :

Ի՞նչ դառըն վիշտ է սըրտիս ,
Երբ օտար տեղ ու լեզու .
Բըոզի իրեն զիս քաշէ ,
Սըրտէս արիւն կը հեզու :
Ո՞հ զայն օտարն ես սիրել ,
Բնաւ չեմ կարող ի սըրտէ .
Չէ այն չէ քաղցր իմ լեզու ,
Որ սիրով զիս կ'ողջունէ :

Իմ մայրենի քաղցր լեզու , ևլն .

Լեզու համակ սիրաշարժ ,
Քանի ճոխ պերճ ու պայծառ .
Մինչ կը հընչես գուն քեզի ,
Սըրտէրն ամէն գողացար .
Հընչէ՛ հընչէ՛ յաւիտեան ,

Վեհ գիւցազանց պերճ երգ դու .
Թօթուէ փոշիդ խոր մութէն ,
Ել երեւան պերճ երգ դու :

Իմ մայրենի քաղցր լեզու , ևյլն :

Յաւերժական սուրբ գրոց մէջ ,
Կեաց միշտ նորէն ու նորէն .
Կշոեալ անոյշ քու տողերդ ,
Թող ամէն սիրոտ արծարծեն .
Շընորհ ունել Արարէն ,
Կամ պէտք ըլլայ աղօթել .
Շըրթունքս սրբէ բորբոքած ,
Կ'աղաղակէ անարգել :

Իմ մայրենի քաղցր լեզու , ևյլն :

ՎԱՆԵՑԻ ՄՈՐ ԵՐԳԸ

Պըզտի՛ տըղայ , չեմ օրօրեր օրօրանքըդ , որ քուն լաս ,
Հայ աղբարքըդ սոքի ելան , մինակ դո՞ւ ետ պիտ՝
մընաս .

Զարթի՛ր , հոգիս , անուշ քունէդ , թող աչքերըդ լուս
տեսնին ,

Արեւմուտքէն արեւ ծագեց , բաղդդը բանեց Հայ ազգին .
Զար բռնութեան ոոկի թախտը ջարդւեցաւ , փար ինկաւ ,
Թախտի տակէն հազար տղգաց տղատութիւն ծագեցաւ ,
Ով որ շուտով սոքի ելլէ , ազատութիւն կը գտնէ ,
Սիրուն որդի՞ս միթէ մինակ չար լուծի տակ պիտ՝
մըտնէ :

Մենք սուլթանէն շատ խնդրեցինք կողկողագին ու ,
ու լացինք ,

Աղի աղի արտասուքով ձեռք ու ստքը լուացինք,
Բայց նա չանաց պաղատանքին ողորմելի հայերուն.
Այդըմ, նայինք, նա կը լու^շ շառաչիւնը սուրերուն:
Տուր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուները, ար-
ձակեմ,

Ու այդ թուլիկ աջլու մէջը մի պողպատէ սուր գընեմ.
Հստրուկ գընա՛ տրեան դաշտը, վերադարձ'ր ա-
զատուած.

Արդեօք մի օր պիտի լըսի՞ս մեր խընդիրքը, ո՛վ
Աստուած:

ԳԱՄԱԽ-ՔԱԹԻՊԱ

ՅՈՐԴՈՐ

Ռուսական պետութիւն, հայե՛ր, ըստ աշխարհի,
Բա՛ւ է քրիստոնէից, հայե՛ր, ըլլալ խեղճ գերի.
Բացեց խիստ պատերազմ, հայե՛ր, ընդդէմ քուրթ
ազգի,
Ափսո՛ս, այն աղքակիցք, հայե՛ր, ի զուր զոհ գացին:

Ռուսական բանակը, հայե՛ր, մըտաւ Հայաստան,
Օսմանեան զօրքերըն, հայե՛ր, դէմ դէմի ելան,
Հըրացան, թնթանօթ, հայե՛ր, գոռալ ըսկըսան,
Ափսո՛ս, այն աղքակիցք, հայե՛ր, ի զուր զոհ գացին:

Հայկաղըն ՄէլիքօՓ, հայե՛ր, ժէնէրալ Ռուսաց,
Կարսը շըրջապատեց, հայե՛ր, վըրան ոռոմբ տեղաց,
Ռումբերըն այրեցին, հայե՛ր,
Ափսո՛ս, այն աղքակիցք, հայե՛ր, ի զուր զոհ գացին:

Տաճկաց մի լուր զըրկեց, հայե՛ր, Լորիս ծերունին
Հայոց մայրաքաղաք, հայե՛ր, պիտ' լինի Կարին,
Եթէ շուտ չի հասնիք, հայե՛ր, ժամեր կորընչին,
Ափսո՛ս, այն աղքակիցք, հայե՛ր, ի զուր զոհ գացին:

••••••••••••

ԵՐԳ ՕՐՈՐՈՅԻ

Քուն եղիր պալաս, աչերդ խուփ արա՛,
Նաշխուն աչքելուդ քուն թող գայ վըրայ.

Օր օր, պալաս, օր օր ու նանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:

Ոսկի խաչ վըզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապել է ծարէն տէր պապան.

Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, ևն:

Մավի հիլուններ կախել եմ ես ալ,
Նազար չես առնուլ, քուն եղիր' մի՛ լալ:
Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, եւն:

Աս քանի՛ մօրըդ անքուն աչքովը
Անցել է օրեր օրօցքիդ քովը.

Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, ևն:

Օրոցքըդ օրուեմ, օրով բօյ քաշես,
Մըլկըտան ձայնով միրաըս չը մաշես.

Օր օր օր, պալաս, օր օր ու նանի, ևն:

Դուն ալ քուն եղիր, ինծի ալ քուն տո՛ւր,
Սուրբ Աստուածամայր, Օննիկիս քուն տո՛ւր:

Օր օր օր, Պալաս, ևն:

Դ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

••••••••••••

ԾԱՂԻԿՆԵՐԻ ԱԽՆ ՄԷՋ

(ԹՐԹՌՈՒԹԻՒՄՆԵՐ)

(ՉՈՒԻՉԻՆԵՐԻ մէկ անժիպ եղանակով)

Բոյր մը ցնցող կը ծաւալի՝
Ծաղիկներու կուրծքին վրբայ .
Հմայք մը լուռ կը թրթըռուց ,
Թերթիկներուն մէջ հեշտալի :

Կը հպանցեն մեղմիկ հովեր ,
Այդ գիւթանքէ ծաղիկներուն .
Վէտվէտումներ թրթըռուն՝
Կը տատանին հոն տարուբեր :

Հովերն անուշ մեղմատատան ,
Կը տարտղնեն բոյրերն հեռուն՝
Գինովցընող շոփրակներուն ,
Որոնք սիրտին հուրքեր կուտան :

Երանգներ նուրբ շինուած հուրէ ,
Ակնարկներուն ցոլք մը կ'առթեն .
Ծաղիկներու թովանքն արդէն՝
Հոգին անգամ կը պարուրէ :

Մինչ հմայքներ գեռ կը տեւեն՝
Տերեւներու թոյլ խարշափին .
Թերթիկ թերթիկ կը թափթփին՝
Իրենց լանջքը սարսող հովէն :

ՀՆՉԱԿԵԱՆ ՄԱՌԵ

Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ ,
Օգնութեան հասէք Հայկաց զաւակներ ,
Վըտանգը մեծ է չըկայ մի օգնող
Ալրող տաճչւողին մի ձեռք կարկառող :

Նա գաւաճան է իր հայրենիքին՝
Որ օգնել չուզեր ճիշդ ժամանակին .
Հարաւ և հիւսիս շատ թափառեցինք ,
Պապական տանն էլ հետքը կորուցինք :

Զար թշնամիքը միշտ ահարեկիչ՝
Թոյն են սերմանել մեր մէջ վարակիչ .
Բաւ է բաւ Հայեր օտարք մեզ խարեն ,
Եւ մեր արիւնով իրանք աշխատեն :

Ասպարէզը բաց է մեղ ահա ,
Զարդում փշրում են մեզի անխնայ ,
Բաւ է մեղ ընկերք լաց ու կոծ անել
Անարատ հային երբէք չի վայլեր :

Կտրիճ Հնչակեան գուրս եկ համարձակ
Պարզեր քո մաքուր անբիծ գրօշակ ,
Վստահ քայլերով սլացիր յառաջ
Եղիր քաջ զինւոր և պարտաճանաչ :

Ի յիշաւակ Հնչկ կրւակց խանամեակին
Վառայի մասնանիւղի «ԳիՏԱԿԻՑ» խումբէն :

ԱԱ. ՍՈՒՆ

Սասուն գաւառ, հին Հայաստան,
Համբաւդ լսեց աշխարհ համայն,
Երիտասարդք են քաջազուն,
Հայոց պարծանք միայն Սասուն:

Սասուն պարաբռ հովիտներով,
Պարծի ընդ միշտ իւր քաջերով,
Որք թ' ուտեն կըլկըլ, կորեկ,
Խաղան ընդ սուր գիշեր ցորեկ:

Սասուն գաւառ, անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով,
Դիմագրեց միշտ թուրդ զօրքերուն,
Հայոց մասուլ եղաւ Սասուն:

Սասուն երկիր լեռներու մէջ,
Ալ որբացաւ իւր ելեւէջ
Քարստ, լեռնոս ու խորդուրորտ,
Սասուն բուրէ այժմ արեան հոտ:

Սասուն երկիր յոյժ բարելի,
Լեռներ, գաշտեր ծաղկօք են լի,
Թէեւ թահուին քանդեց Սասուն,
Բիւր Հայք բաղձան ոեւ հողերուն:

Ցուրտ գիտաց բարգեալ գէլ գէզ,
Եւրոպացիք եկան ի տես,
Մարտիրոսաց կորդն է Սասուն,
Արժանացաւ ոըրբոց դասուն:

Արի Գըրգօն, սուրբ մարտիրոս,
Ի ձեռն Քրդաց ինկաւ իբր որս,
Գերի եղաւ մնդութ տաճկին,
Քաջ նահատակն հայոց ազգին:

Քաջ Գըրգօն հարսն է՛ Շաքէն,
Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
Կամաւ ձգեց զինք լեռնէն վար,
Նահատակուիլ ազգին համար:

Սասունոյ բնիկք բոլոր հայ են,
Ֆէրիգն եղաւ նոցա կայէն,
Սասունոյ մէկ մաս կ'ըսուի Կէլի,
Արիւն թափեց զերդ Արէլի:

Սասունոյ հարսեր գերի գացին,
Մանկունք Քրդաց ձեռք մնացին,
Սըրոյ ճարակ եղաւ Սասուն,
Գիւղեր արտեր, այգիք հասուն:

Թէեւ ինկաւ մնդէն, անոք,
Առ երկին չետ բնաւ բողոք,
Գետի նման հոսող արիւն,
Գետնէն բողոք ետ Աստուծոյն:

Թէեւ ինկար, ո՛վ վեհ Սասուն,
Բայց դաս տուիր գերեալ Հայուն,
Թէ սուր ընդ սուր, բուռն ընդ բուռն,
Բախմամբ ծագի արեւ մեր տան:



ՄԱՂԹԱԱՆՔ

Տէր կեցո՛ գու ըղչայս ,
Եւ արա՛ զնոսա պալծառս ,
Կեցո՛ ըղչայս .

Զողորմութիւնըդ վերին՝
Հաճեա՛ ձնիկ նոցին ,
Զի նովաւ մարթասցին
Ապրել յաստիս :

Ո՞վ Տէր մեր , Տէր փութա՛ ,
Զազգ մեր համայն փրկեա՛
Ի թշնամիաց .

Կափո՛ զաչըս նոցուն .
Հա՛տ զարմատոցն ըզբուն ,
Եւ զազգ մեր պարտասուն
Արա հըզօր :

Աչովդ համատարած ,
Զազգ մեր արտահալած ,
Փոյթ գումարեա .

Ալխարհ Արարատեան .
Ի վայր մեր ծննդեան .
Որ այժմ է սեփական ,
Օտար ազգաց :

Ի քո իջեալ տեղի
Զաթոռ հայրապետի
Մեր հաստատեա՛ .

Զերկարութիւն կենաց՝
Հօր մեր առտուածազգեաց ,
Ծնորհեա՛ պետին մեր հարց ,
Որ զմեղ հովուէ :

Մ . Դ . ԹԱՂԻԱԽԵԱՆՑ

ՋՈՎԵԳԳ

Ի ԶՄԻՐԼԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ

Բարեաւ եկիր Հայր պատուական ,
Մեր ամենուս Դու սիրական .
Ազգն անձկանոք Զեղ կըսպասէր ,
Հովիւըդ քաջ և Ազգասէր .

Կեաց Դու յաւէտ , Կեաց անսասան
Հայրենեաց զոհ Հայր Սրբազան :

Ազգը համայն ուրախ գուարթ ,
Փա՛ռք Բարձրելոյն զոչէ և արդ .

Որ պարգեւեց հէզ Հայ Ազգին ,
Ազատութիւն շնորհ անգին .

Կեաց Դու յաւէտ Հայր Իզմիրեան
ազատութեան վեհ ախոյեան :

Հայ եղբայրներ գիտնանք յարգել ,
Ազատութեան լոյսն անարգել ,
Որ մեզ տուաւ նոր կեանք , նոր յոյս ,
Յառաջնորգել գէպ յանշէջ լոյս .

Կեաց դու յաւէտ Հայր Իզմիրեան
Ազատութեան քաջ ախոյեան :

Գորովագութ Սրբազան Տէր ,
Կարօտըդ մեզ կը տոչորէր .

Այլ արդ հրճուիմք մեք հոգեպէս ,
Անձնանուէր հովուիդ ի տես .

Մատջիմք առ Քեզ Հայր սիրալիր :
Համբուրելով զԱծդ օրհնաձիր :
ՈԲՐԱՀԱՄ ՔՀՆՅ . ԷՊԵԽԱՆ



Ս Ի Բ Ե Բ Գ

Ահա ելաւ լուսին արծաթ
Մութ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գեղազարդ
Դուրս սահեցաւ ժայռերէն.
Անուշ հովիկ փչէ յուշիկ
Ու գէպ ինձ բեր բիւր ծիր ալիք :

Նաւակին մէջ իմ—գեղուհին
Փռուած անփոյթ լուսնի տակ,
Կը ձայնուկցի իր կիթառին
Հնչուն ձայնով մը յատակ.
Անուշ հովիկ փչէ յուշիկ,
Ու գէպ ինձ բեր երգն անուշիկ :

Զայնով կ'երգէ սէր ու գգուանք,
Համակ յուզում ու սարսուռ,
Ա'լ թո՛ղ աղջիկ երգն ու նուազ
Բաց ոչքերդդ ինձ դարձուր .

Անուշ հովիկ փչէ յուշիկ,
Ու գէպ ինձ բեր սէրն անուշիկ :

Հ Ո Վ Ի Ի Ե Ի Հ Ո Վ Ո Ւ Հ Ի

Երբ օդը անձրեւի է,
Քու բարի մայրիկըդ
Պէտք է խըրճիթը պահէ
Այդ քու փափուկ անձըդ :

—Մօրըս խոգը չէ թէ թըրչիմ,
Կ'ասէ չուտով տի երթաս,
Չէ նէ կ'ելլեմ փէտով մը
Բեղ տըռօշմիմ ու ոնաս .

Ճատ կը ցաւիմ որ ձեղ հետ
Այսպէս խըստիւ վարուին .
Եթէ կ'ուզէք ինձի հետ
Փախչիլ ի միստին :

—Ախրեր ինչո՞ւ տի փախչիմ,
Ետեւէս մարդ չի վազեր .
Կովերըս որո՞ւ տի ձըգեմ,
Որ ուրիշ մարդ չեմ սիրեր :

Ո՞վ դու աղնիւ հովուուչի ,
Ընդէ՞ր մերժես իմ սէր .
Քո գէմք նըման է լուսնի ,
Որ իմ սըրտիս տիրէր :

—Զեմ խասկանայ քո լեզուդ ,
Ի՞նչ կ'ուզես դուն ինձմէ ,
Ամէն բէնի եմ հըմուտ ,
Այս դուրս է իմ գըմիէ :

Տո՛ւր ինձ քու ձեռքդ ու երթանք
Պէպ ի անտառին խորըն ,
Հոն գըտնենք մեր ապաստան .
Նախանձի թագաւորըն :

—Պարոն, կեցեր ի՞նչ կ'ասես,
ես իմ կովերը կ'արտածեմ.
Գրնա՛ ուրիշ մը գըտնես,
Անտառն երթամ ի՞նչ անեմ:

Թո՛ղ որ գոնէ քու այտէն
Ընդունիս հս մէկ համբոյը,
Սըրտիս տիրեցիր արդէն,
Անուանեմ քեզ ի՞նձի քոյր:

—Ատի չգիտեմ ի՞նչ բան է,
Պէտք է իմ մօր խարցունեմ,
Անի թէ տո՛ւր որ ասէ,
Ի՞նչ որ է քեզ նուիրեմ:

Գիտեմ, մայրըդ կ'արգիլէ,
Պէտք չէ անոր հարցունես.
Սիրտըդ իմ սըրտիս փարէ՛,
Պատասխանը դու կ'առնես:

—Պարա՞ն, շատ լաւ կը խօսիս,
Խասկացայ ես քու միտքըդ,
Բայց սա փէտ որ կը տեսնես,
Կը չափեմ ես քու չորս դիգ:
8. ԱՃԵՄԵՂՆ

Պ Ա Ր Ն Ո Ւ Ա Ս Ե Ա Ց

Աշխոյժ նուաստին,
Անվեհեր ճակատ՝

Ընդդէմ փոթորկին,
Երգէ անփոյթ զուարթ:
Լարիթ թիւմէրէլէլէս հս հս:

Կոհակը փրփրագէղ,
Զին սպակում՝ վախ՝ մեղ.
Հողմունք սաստկահար,
Գրգուեն մեղ ի պար:
Լարիթ թիւմէրէլէլէս հս հս:

Օն, խմենք զուարթ,
Գինին մինչ յատակ.
Օն, գրկենք զիրար,
Պարենք անդադար:
Լարիթ թիւմէրէլէլէս հս հս:

Լոեցէ՛ք, գիտեցէ՛ք,
Մինչդեռ մենք հսս եկած ենք.
Ահա ծերն՝ իւր ոտքերն,
Հսս հսն շուտ՝ տանի փոյթ:

Ա՛յ, ա՛յ, ա՛յ, պիտ՝ իյնայ,
Օ՛ն, բռնենք՝ մեղք է մեղք.
Հա՛ հա՛ հա՛ կը խընդայ,
Հո՛ս եկէք ամենքս ալ ծափ զարնենք

Զանգակն ուժգնապիրկ,
Կոչէ մեղ ի կարգ.
Վերջ տանք խնդութեան,
Քաշենք մեր պարան:
Լարիթ թիւմէրէլէլէս հս հս:

ՎԵՐՋԻՆ ՎԱՐԴ

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանեց իւր կըրծից,
Ինձ պարզեւեց, վերջին վարդ :

Մանկութեան վերջին ժամերն
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ
Դու ես միայն, վերջին վարդ :

Գարնան օրերերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում,
Միշտ սպասում եմ քու տեսքին
Դուն ամառուայ վերջին վարդ :

Երջանիկ կեանքիս օրերը
Ճաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միտքը բերիր, վերջին վարդ :

Շատ չի տեւել, կը բացուի
Առաջիս սեւ գերեզման,
Էս աշխարհից միայն քեզ
Հետքս կ'առնում, վերջին վարդ :

Ք. 8.—Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ



ԻՆՉ ՀԱՄԱՐ ԶԵ

Ինձ համար չէ՝ գարնան գալը,
Ինձ համար չէ՝ ծառի ծաղկելը,
Ուրախութեան ուրտի գըրգիռը,
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար :

Ինձ համար չէ՝ կենաց բաղդը,
Ինձ համար չէ՝ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար :

Ինձ համար չէ՝ փայլուն լուսնի
Անտառ ու առ լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար :

Ինձ համար չէ՝ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ ասելը
«Յիշատոն յարեաւ» չէ՝ ինձ համար :

Ինձ համար չէ՝ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՝ աղջկայ տըխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուելը,
Բարեկամաց՝ չէ՝ ինձ համար :

Բայց ինձ համար կու գայ ժամը,
Կ'երթամ թըշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գընդակը,
Անդ պատրաստած է ինձ համար :
(թարգմ.) Ք. 8.—Պ. ՊԱՏԿԱՆԵԱՆ



ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆԸ ԵՍ

Ո՞վ Հայր մեր, Հայր որ ես յերկին՝
Սուրբ եղիցի անուն քոյին.
Եկեացէ մեզ, Աստուած հըզօր,
Արքայութիւն քո երկնաւոր,
Եղիցին կամք քո խընկելի
Որպէս յերկինս՝ և աստ յերկրի :

Հզհաց հոգւոյն մեր և մարմնոյ
Տուր և այսօր շընորհիւ քոյ,
Եւ թո՛ղ մեզ թո՛ղ ըզմեր պարտիս
Որպէս և մեք թողումք յաստիս,
Ամենեցուն որ մեզ մեղան
Կամ մնացին մեզ պարտապան :

Ո՞հ, մի՛ թողուր ի փորձութիւն,
Այլ հանապազ հա՛ս յօգնութիւն,
Եւ յամենայն չարին մրցմանց
Փըրկեա՛ ըզմեզ Տէ՛ր գըթութեանց,
Զի քո է միշտ արքայութիւն,
Քո փառք պատիւ և զօրութիւն :

Ամէն :

Եղանակ
Գերցաւեկան

Խօսք
ԽՈՐԵՆ ԵՊԻՍ. ՆԱՐ-ՊԵՅ



ԱԶԱՏ ՄԱՏԵՆԱՇԱՐ



Այս շաբթով պիտի հրատարակուին իին ու նոր ամէն տեսալի ազգային ու հայրենասիրական զգուշի : Արդէն հրատարակուած են .

- | | |
|--|------|
| 1. Սեւ Հոդեթ կամ Թետին Գիշեթ Արարատեան, Թատրերգ, | |
| Պատրոս Պուրեանի | 2 |
| 2. Աւերակ (Բանտի յիշատակներ), Վահան Թօռօվենցի | 1 |
| 3. Ընդարձակ Հայկական Երգարան, Ա. Հատոր | 3,50 |

Հետզհետէ պիտի հրատարակուին՝

- | | |
|--|--|
| 4. Վանզոյժ Խրիմեան Հայրիկի | |
| 5. Երիտասարդը, Թըգմ. Յ. Ալոմեան | |
| 6. Ընդարձակ Հայկական Երգարան, Բ. Հատոր | |



Զարդարեան Դրատան մէջ կը վաճառուին նաև հետեւեալ ազատ հրատարակութիւնները :

ՔԻՒԶԱՆԹԵՄ, Մ. Պարսամեան	4
ԿԱՐՄԻՐ ՕՐԵՐ	6, 25
ԶԵՏԱՆՆԵՐԸ, Կ. Բարդարեան	10
ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶի մեծագիր պատկեր	2
ՓՏՈՒԹԵԱՆ ՕՃԱխ	8
ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ, Ա. Եւ Բ. Շարք	5
ՓՐԿԻՉՆԵՐԸ, Թատերգութիւն Առանձարի	6
ՎՃԻ ԾԻԾԱՂԸ, Առանձար	12, 20

Դիմել Զարդարեան Գրատուն, Կ. Պոլիս,

Զամանակներիւ, թիւ 24—26

ՄՄ Հայոցիութեան գրադարան



MAL036800

